

Ա Ւ Խ Օ Տ Վ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՆԴՀԱՅԻ, ԲԵԼՈՐՈՒԺԻ, ԳՐԵԳՈՐԻ  
ԵՒ ՔԵՐԵՑԻ


ԻՆՆԵՐՈՐԴ Տարի



ՅԵՐԱԿՈՎԱՆԻ

Կ ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՑԱԿՈՎ, ԲԵՐԱՑ

1874



# ԱՐԵՎՈՅՑ

ԽԵՆՔՐՈՒԹ ՏԱՐԻ  
ԹԻՒ 9.

ՍԵՊՏԵՄԲԵՐ 30  
1874.

## ԱՄՍԱԳԻՐ

Ա.Զ.Ա.Յ.Ն., Բ.Ա.Յ.Ի.Բ.Ա.Կ.Ն. ԵԿ Գ.Յ.Գ.Ի.Տ.Ա.Կ.Ո.Ե

## ՈՒՍՈՒՄՆ ՄԱՐԴՈՅ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅԱՂԱԳՍ ԱՌՈՂ Յ. ՄԱՐԴՈՅ

ՆԵՐԱԽՈՒԹԻՒՆ

Բանիթիւնն ժեց և ինքանի շնառածէ, իրաւամբ կ'ասէ բանաստեղծ ոմն հռչակաւոր :

Ավ մորդ շուրջ նայէ, զննէ ինչ որ գըեզ կը շրջապատէ, նայէ անհուն ապածութեան վերայ, բարձրացներ աչ բերդ դէպ ՚ի երկնակամարն, խորա սուզէ, թափանցէ ՚ի խօրս երկրի, ու-

մեն տեղ պիտի տեսնես շորժումն, ամեն տեղ զուգախառնութիւն եւ բաղադրութիւն, ամեն տեղ լուծումն եւ բաժանումն, ամեն տեղ ծնունդ եւ մահ : Անչ են այս փափոխութիւններն, այս կերպաւորութիւններն, եւթէ ոչ յայտնի նշանք շորժման եւ կենդանութեան : Անդ, որ կը կարծես

Եւէ մահն կը թաղէ իւր զահն ՚ի խորս  
աշնչութեան , անդէն նոյն ոքքնչութե-  
նէն կենցէ որ և իցէ մի նոր բան :  
Համեմատէ ներկայիս հետ ինչ որ ան-  
ց ած է երկար գարերէն ՚ի վեր , և դու-  
սիսի տեսնես սոյն խօսքերու ճշմոր-  
տութիւնն . — Մահն չէ եղջուան իւմ ա-  
ռ սիանութիւն , այլ աշնուացուն բնութիւնն :  
Բոյսք և կենդանիք և նոյն խոկ մար-  
դըն իրենց գոյութեան տուաջին վայր-  
կենէն սկսեալ տեսակ տեսակ փոփո-  
խութիւններ կը կրեն . պէսպէս կիր-  
սպէր կըստանան , մինչեւ որ կը համափ-  
մահն եւ այն ժամանակ մարմիններն  
կը լուծուին և փոշոց փոքրիկ կոյտ մի  
կը կազմեն :

Այն երեւոյթներն , որոնք կամաց  
կամաց կը կատարուին յետ մահուան ,  
կը տեսնեմք ամեն որ որ նորին խոկ ա-  
րագ արագ կը կատարուին հրաց գոր-  
ծողութեամբ . և այն , ինչ որ կը կար-  
ծեմք թէ հուրն կործանեց խապառ ,  
կը գոտնեմք զայն մի այլ վիճակի մէջ :  
Ինչ որ կը տեսնեմք այսօր մեր աշաց  
առջեւ , այս ամենն նոյն կրտպիւ փո-  
խուած կատարուած են հազարաւոր  
տարիններէ ՚ի վեր , երբ տակաւին  
մարդկային աչք մի կարտղ չէր զայնո  
նշմարել : Հազարաւոր մարմիններ թաղ-  
ուած են երկրի ծոցոյն մէջ , որոնք ակ-  
ներեւ և անհերքելի կիրափիւ ցոյց կը  
տան ոչ թէ մի քանի բուսոց կամ մաս-  
նաւոր կենդանեաց հին աւուրց գոյու-  
թիւնն , այլ գոյութիւն ամբողջ տե-  
սակաց բուսոց և կենդանեաց , որոնք  
տագրեցան և ըքքացան առանց ուրիշ  
հետք մի թողոց իրենց անցած ժամա-  
նակ , բայց մեայն քարացած մնացորդ-  
ներ : Ամեն առ կը տեսնեմք նշաններ ,  
որոնք կապացուցաննեն թէ ոչ մի ձեւ  
կամ մորմն առ որ գոյութիւն չէ ստեղ-  
ծուած յաւիտեան մնալու համար :

Բայց պիսի առեն մեզ ուստի են

ուրեմն այս յար նարանոր նիւթերն ,  
որով կարծես թէ բնութիւնն անդա-  
գար պէտք կը զգոյ անապաւելի երե-  
ւոյթներ արտադրելու , զոր և կը կու-  
տարէ զեզուն և անապաւ առատու-  
թիւնն միայն կ'ապչեցնէ և կը զարմա-  
ցնէ զմեղ : Այս առ երեսս գմուտ-  
րին հարցումներու պատասխանն խիստ  
գիւրինէ և պարզ սորա պատասխանն  
այն է , որ բնութիւնն գանձներ կը  
պարփակէ իւր ծոցոյն մէջ : Մարմին-  
ներու ձեւն եւ յարաբերութիւններն  
կը փոփոխին , բայց նիւթն անկորուստ  
կը մնայ : Այն մարմինները , որոնք ՚ի  
հող կը գառնան , իրենց նիւթն հաղոյն  
կը տան : Երբ բցուելն և կենդանիններն  
կը փոփոխ կամ կը սպառին , նոքա կը  
լուծուին , կը բաժնուին և պարզ սու-  
րերքներու կը փոխաւին , որոց մի մասն  
կը գալանայ և միւս մասն կը մնայ իր-  
եւ փոշի : Այս մնացորդներն կամ  
զուտ ածներն այն նիւթն են , զոր բը-  
նութիւնը գործ կը դնէ նորանոր մոր-  
միններ կազմաւ որելու համար : — Եր-  
բէս հանգստութիւն չէ բնութիւն մէջ ,  
այլ միշտ շարժումն , միշտ փոփոխու-  
թիւն և յարատեւ կերպաւ որութիւն :  
Այն փայտն , որ հազարաւ որ տարիններ  
առաջ կը պատկանէր մի կանաչագեղ  
անտառի , այսօր մեք կը հանեմք զայն  
երկրի ծոցէն . այս է գեանածուին .  
այս է զոր կը վառեն . ոչ մի հիւլէ չը  
կորսուիր իրմէն . մեծ մասն կը բարձ-  
րանայ օգոյն մէջ և ներկայ բուսական  
թագաւորութեանն կը մատակարարէ  
կարեւոր մնունդ զարդարման : Այս  
բցուերն և տունկերն խոկ կը ծառայեն  
՚ի մնունդ մարդկան և կենդանեաց :  
Այսպէս ուրիշն այն նիւթն , որ հազա-  
րաւ որ տարիններ առաջ կը պատկանէր  
մի ծառի և թերեւս մարդ չը կորի իւր

շուրջ, այսօր մարդոց և կենդանեաց կազմաւորիչ մասն կը կազմէ, Նորոնոր կերպաւորութիւններն յէտ ժամանակ կայ պիտի մուծանեն զայն ՚ի կազմա, աղութիւն բռւաց եւ այսպէս պիտի անեւէ միշտ վախիսութիւն, միշտ անդրադառութիւն, միշտ շարժումն և կենդանութիւն: Միով բանիւնիւնիւնն ամեն ձեւեր և կերպիր կ'առնու, մէկ մարմնէն միւսին կը փոխութէւ այս ընթացքին մէջ ամեննեւին չը կայ ոչ դադար եւ ոչ հանդիսաւ, մինչեւ այն օրն, յարում բնութիւն համայն պիտի լուծուի, և պիտի լինի երկին նոր եւ երկիր նոր հրամանաւ Արարշապետին:

Եթէ աշխարհս կազմող նիւթը լուծենիր և բաժնենք, պիտի գտնենք այն պիտի և ութիւններ որ այլ եւս չեն բաժնուիր, այլ զուտ կը մնան: Ահա այս էւթիւններն են որ իրարու հետ միանալով կը կազմէն անհամար և անսուլ տեսակ մարմններ: Այս էւթիւնները կ'սնուաննին պարեր, կամ դարձ նարմներ, որոց թիւն ընդհանրա ողէս վաթաւուն և չորս կը հաշուեն ներ կայ ժամանակիս մէջ: Ասկայն այս տարբերներէն մի քանի հասն միայն շարժուակ կը միանան, կը բաղադրին և զանազան կերպութիւններ կ'արտադրէն: Այս մարմններէն տասն և հինգ հասն միայն կը տեսնեմը կենդան նական թագաւորութեան եւ մարդոց մէջ, Բյուսերն գրեթէ տասն և ութն հաստ միայն կը պարունակին: Եթէ ակնարկ մ' ձգենք բնութեան արտադրութեանց վերայ, խակայն կը տեսնեմը, որ հարկ է անշուշտ ճանաչել իմանալ սոյն տարրներն եւ իրենց բաղադրութիւններն:

Աչ մի պարզ նարմն կարող չէ յայլ փոխորկիլ, վասն զի խրաբանշխուրն ունի իւր յատկութիւնն և կը պահ պանէ զայն իւր գցութենէն ՚ի վեր:

Ասկայն տարրերն կարող են զանազան ձեւեր ստանալ և բոլորովին տարրեր յատկութիւն ունեցող մարմններու հետ միանալ: Այս տարրերներէն մի քանի հասն այնպիսի ձգտումն ունին միանալու, որ նոցա բաղադրութիւնն ամեն պարտգոյի մէջ կը կատարուի, երբ իրար կը հանդիպին, այն ինչ կան նաեւ այնպիսիք, որոց միանալն կամ բաղսդրիլն այնչափ դժուարին է, զըր կարելի է միայն խիստ նուրբ և ճարտար միջոցներով իրագործել: Առաջին գիսուածին համար կ'ասեն թէ՝ մարմններն ուժահան ինամունիւնն իսամ հայութն ունին առ միմեւանս, իսկ ընդ հակառակն երկրորդ դիսուածին համար կ'ասեն թէ՝ այս խնամութիւնն կամ համար մին գազային, թթուածին (oxigène) անուամբ, որ ամենէն աւելի ունի մէծ միաւորական յատկութիւնն պարզ մարմններու հետ, և այս տարրն է, զըր յաճախ կը տեսնեմը ուրիշ մարմնոց բաղսդրութեան մէջ: Թթուածիննեն յետոց կը գան բորակածին (azote) ջրածին (hydrogène) ածխածին (carbon) որոց բաղսդրութիւններն խիստ յաճախ են, ինչպէս եւ յաճախ են բանի մը մտալոց բաղսդրութիւններն:

ՏԱՐԵՐՔ, ՊԱՐՁ ՄԱՐՄԻՆՔ,

Թթուածինն է մի գազային մարմնին, անգոյն եւ անհոտ, որ ոչ միայն համատարած օգոյ և ջրոյ ամենանշանաւոր մասն կը կազմէ, այլ կը գտնուի նաեւ ուրիշ շատ մարմններու մէջ: Այնպէս որ կարող ենք առաջ թէ՝ թթուածինն երկրտղն տիւ:

իւր մէջ գտնուած կակայ ամբողջութեան երրորդ մասն կը կազմէ : Թթվուածինն գրեթէ բոլոր բազագրուաղ եւ լուծուող երեւց միներու արտադրիչներէն մին է :

Այդին, իմբին, դադին, կամ նեփին թթվուածնի աղդեցութենէն յառաջ կը գան, որ միանալով մի ու րիշ մարմաց հետ՝ գալացին նոր արտադրութիւն յառաջ կը բերէ :

Թթվուածինն է, որ կրտեն վառ կը պահէ և թէպէտ ինքնին միայն չայրիբ, բայց այրելու և սպառելու յատկութիւն ունի, ուստի և մեծ արագութեամբ և լցո արտադրելով կ'այրէ կրագառէ ամեն այրելի մարմիններ : Այս պատճառաւ է որ թթվուածնին տուած են այրեցող անուն . նոյնպէս կ'անուաննեն նաև օդ ինստիւտ, վասն զի անհրաժեշտ կարեւոր է մարդոց և կենդանեաց կեանքն առահպաննելու համար :

Սոյն տարբն ինուածին կ'անուանի այն պատճառաւ, որտիշեաւու գրեթէ ամեն մարմիններու բազագրութիւնն մէջ կը մանէ, որոնք կծու կամ թթվուամբ ունին :

Երբ թթվուածինն մի այլ մարմաց հետ միանայ, այս միացումն կ'անուանի ժանդահարութն (oxydation). իսկ այն միացումն յառաջ եկուծ արտադրութիւնն կ'անուանի օսֆի, ժանդ (oxyde) Այսպէս ուրեմն երբ երկաթն կը կարմիրի օդոց մէջ կը միանայ թթվուածնի հետ, կը ժանդահարի : իսկ երկաթէն յառաջ եկած արտադրութիւնն կանուանի ժանդ, օսֆի :

Պէաք է նկատել, որ ամեն ժանդահարութիւն լերմութեան արտադրութեամբ կը կատարուի . այս առմիւ ժանդահարութն կը նկատուի իբրեւ այսո՞ն, թէւ կը կատարուի առանց լցո արտադրելու : Ուշով ա-

րագ լինի այն սցլումն, այնչափ առելի լի լաւ կարող են նշնարել մէր զգայարանքներն այն լերմութիւնն որ կ'արտադրի . իսկ ընդհակառակն երբ ոյրու մն յամբ և գանդալէ ոքքիթէ ունենշնարելի է լերմութեան արտադրութիւնն :

Երբ կրտեն կ'այրէ զիայտն արագ կամ յամբ, ոյն արտադրութիւնն եւ յամբութիւնն տարբէր օրինակներ կը նետային մեզ : Երկու դիպուածին մէջ եւս լերմութեան քանակութիւնն նայն է, միայն թէ մի կազմէն երեւայթն արագ է և անցաւար . իսկ միւս կազմն գրեթէ անշնարելի եւ կը տեւէ երկար տարիներ :

Օքսիդներն կամ ժանդերն երկու տեսակ են . ոմանք թթվու են . իսկ ոմանք ոչ : Առաջնորդներն պարզուիւակ'անուաններն լինու, տափ, իսկ միւսներն լին խռիսի կամ լին (base) :

Սոյն երկու առեսակ պախկներն ես մեծ յարակցութիւն կամ խնամութիւն ունին իրարու հետ, իսկըն կը միանան, երբ իրարու կը հանդիպին : Այս միւսնորութիւնն կամ բազագրութիւնն կ'անուանի առ :

Այս թթվուածինն, որ մենք կը ծրծենք կամ կը ներշնչենք ոչ միայն կը նպաստէ մեր մարմառու որ գործարանաց նիւթոց վերակազմութիւնն, այլ նաև կը ծառայէ նոյնպէս անդադար եղծելու մարդկային մարմինն կազմող հիւթերն : Այս պատճառաւ թթվուածինն ներշնչելն սահմանուած է կենդանական լերմութիւնն արտադրելու համար :

Բայց թերեւս ասեն մեզ, թէ ինչ չին է որ այսքան անհամար արտարածներ թթվուածին կը ներշնչեն և համարած օդոց մէջն թթվուածնի քանակութիւնն ըստ նուազիր : Մեք կը պատճիսնեմք, որ ընտագմեան նախա-

անս Արարիչն տինովէս անօրինած է, որ  
բնութիւնն ինքն կը հոկէ և թթուած  
ծին կ'արտադրէ, Այս արտադրիչնե  
րըն են բոյսերու և տունկերու կանաչ  
մասունքներն, Սպա են ահա, որ ՚ի  
ցերեկի արեգական աղբեցութեան  
և թթարկուելով թթուածին կը մատա  
կարարեն կենդանեաց, Հազմերը կա  
նաշագեղ երկիներէն կը տանին և կը  
սփռեն թթուածին այն երկներու  
մէջ, ուր չը կան բոյսը և կանաչելով:

Եատ ժամանակ չէ, որ համասա  
րած օդան կամ մժնողրախն մէջ գը  
տած են մի տեսակ թթուածին, սաս  
տիկ հոտ ոլ, եւ անուանած են Օզոն (ozone), որ հ ամրապած օդայ հոտա  
ւէտ մասն կը կազմէ. Երբ օդն սաս  
տիկ խացացած է ելք որականութեամբ  
այն ժամանակ աւելի կը նշմորուի ողնի  
գոյս թթիւնն: Օզոն ունի խիստ մեծ  
զօրութիւն ժամանակարձան: Նա գոյս  
ցես սահմանուած է օդայ մէջ տարա  
ծուած փոսուն և վեսասակար նիւթերն  
ոչնչացնելու հոմար:

Բորախիֆն (azote) ևս թթուածնի  
նման, անդայն, անհամ և անհոտ գա  
զացին մարմին է: Բորոկածինն կը կազմէ  
մեր շնչած կամ ծծած օդայ չորս հինգ  
երրորդ կամ հինգէն չորս մասն: Ուրիշ  
մարմիններու հետ այնքան սերտ խր  
նամութիւն կամ կապակցական յատ  
կութիւն չունի: Սակայն կը գանուի  
շատ նիւթերու մէջ, որուք մեծ մա  
սամբ կենդանական են, և շատ կարե  
ւոր է մարդոյ և կենդանեաց մարմին  
ներու մնադեան համար, ինչպէս են  
ալբոմինյն (albumineuse) հիւթերն, կա  
թըն, հաւկիթն, միսն, ազգի ազգի  
ցորեաններն, կանաչ պտուղներն:

Այս նիւթերն շուտով կը լուծաբին  
երբ կենդանի մարմիններէն կը բաժ  
նուին և սորոս պատճառն այն է, որ  
բարսկածինն սակաւ հակումն ունի

դէս ՚ի միւս պարզ մայմններն:  
Թթուածինն և բորակածինն երբ ի  
բարու հետ կը բաղադրին մեծ դեր  
կը խաղան բուաց մնադեան համար  
եւ այն: Սցն բաղադրաւթիւնն է ա  
նուշտը (ammoniaque).

Բորակածինն ինքնին անընդունակ է  
մարդկան և կենդանեաց կեանքն պահա  
պանելու և ամեն բոց խօսն կը շիմանի,  
երբ այն գաղին մէջ կընկղմի: և հը<sup>1</sup>  
նումն կենդանական նիւթ կ'անուա  
նէին սցն գաղին, այսինքն կենդանա  
կան նիւթոց ծնանող, որովհետեւ կեն  
դանական հիւթոց հիմն կը կազմէ բո  
րակածինն:

Ջրածին (hydrogène) եւս նյժնովէս  
մի անդայն, անհամ և անհոտ գազա  
յին մարմին է: Թթուածնի և բորս  
կածնի նման ջրածինն եւս առանձին  
չը գտնուիր բնութեան մէջ, այլ միշտ  
ընկերացած է այնպիսի մարմիններու,  
որովք կը կազմէ հեղուկային կամ  
կարծր բաղադրաւթիւններ:

Խնչպէս անունն եւս ցոյց կը տայ  
ջրածինն կը կազմէ ջրայ մի մասն: Ու  
րիշն ջռ բն առանձին տարր չէ, ինչ  
պէս ՚ի հնումն կը կարծէին, այլ բա  
զագրուած է այլ մարմինոց հետ: Ջրա  
ծինն կը գտնուի գրեթէ բոլոր կենդա  
նական և բուսական հիւթերու մէջ:  
Հանքային թագաւորութեան մէջ այն  
քան տարածուած չէ: Ջրածինն ամեն  
գաղերէն թեթեւ է: Տասն և չորս  
անգամ թեթեւակշիռ է մժնողրափի  
կամ հասարակ օդէն:

Խնչպէս բորակածինն, նյժնովէս և  
ջրածինն կարող չէ ինքնին կենդանեաց  
շնչառութիւնն պահպանել նմանապէս  
այրիլ կամ վատիլ, թէեւ թթուածնի  
աղդեցութիւ կը վատի ինքնին: Ջրածնի  
բոցն այնքան լուսաւոր չէ: (ալքիմի  
կաներու վիզուալիայական լապաերն):  
Ջրածնի և թթուածնի բաղադրաւթե-

նեն յառաջ Եկած ջերմութիւնն առ սաւել սաստիկ է քան որ և իցէ ար ուեատական ջերմութիւն : Գրածնի և բրակածնի բազադրութիւնն եռիխառ նշանաւոր է , որ անո-լար (ammoniaque) կ'անուանի :

Քլոր (chloré) է գաղացին մորմն , գեղիականաց , սաստիկ և հեղձոցիչ հոտով : Եստ վեստակոր էր մարդոյ ջշտութեան գործարանաց , եթէ այն գաղը ինքնօրէն կամ ան խուն գտնուեէր բնութեան մէջ , իսկ բազմադրութեամբ խխառ կարեւոր հիւմեր կը կազմէ մարդոյ համար , ինչպէս են հոտարակ ալ , չլորուի իշ (chlorure de chaux) ալլուան ինդուր (acide hydrochlorique) չլրախըր (chloroforme) . Ինեգանութիւնն եր բուսական նիւթաց վերայ լուծիչ և քակորչ ազգեցութիւնն ունի բըզն , ուստի եւ գործ կը դնեն զայն նեխառ գաղերն եւ վեստակոր հոտու մերն ոշնչացնելու համար :

Մծումբ (soufre) է հոտատառուն մորմին , բաւականին տարածուած բնութեան մէջ . գեղին է և դիւրաւ կը վասի . կը գտնուի թէ առանձինն և թէ ուրիշ մարմիններու հետ , մանուանդ մետաղներու և յաւէտ եր կոմի , որով կը կազմէ լուստրարն կամ երկաթածծումբն : Իսկ պղնձի հետ կը կազմէ պղնձի ծծումբն : Մծումբն վառուած ժամանակ կը խառնուի մըթնալորտի թթուածնին հետ և կը գոյացնէ մի հեղձուցիչ գազ , որ ծծմբաթթու կ'անուանի և զօր երբեմն որ խալմամբ ծծմբագուրը կը կոչեն :

Եթէ ծծումբի հետ խառնուած թթուածնին շատ լինի կ'արտադրի արջասպ : Երբ ծծումբն կը խառնուի ջրածնի հետ միտեսակ գազ կ'արտադրի , սարսափելի հոտով , նման նեխառ հաւելմի հոտոյն :

Մծումբն կը գտնուի նույն թէ մարդոյ , թէ կենդանուաց մորմիններու և թէ բուսաց մէջ :

Ֆոսֆոր (phosphore) է հաստատուն , գեղին եւ թափանցիկ մարմին , մամենանն իտկուց , որ խուռուելով օդոյ թթուածնի հետ կը կազմէ ֆոսֆորաթթուն , որ կորեւոր է թէ մարդոյ : Թէ կենդանուաց և թէ բուսակունոց կազմուորութեան :

Ֆոսֆորն տառապարէն կը գտնուի տիերաց և տապիասացն նիւթոյ մէջ , ուղեղահիւթի և ջլանիւթի մէջ , մարդ և ցորենեղինաց մէջ :

Ֆոսֆորն բազմագրութիւն ջրածնի հետ կ'արտադրէ մի թթուածնոր գաղզզուելի հոտով , որ մանաւանդ կը գոյանայ աւելի կենդանական նեխառ հիւմերէ :

Քանի մի ժամանեակէն ՚ի վեր մրկներն կոտորելու համար գործ կը դրնեն , փոխանակ մինդեղի , քիմիական լուցիներու ֆոսֆորն , որ և շատ անգամ մահանիթ եղած է մարդոց :

Շորին (fluor) է անգոյն գաղացին մարմին , որ ինքնօրէն չը գտնուիր բընուեն բնութեան մէջ , այլ յաւէտ միացած խալինի (caleium) հետ . փոքրիկ քանակութեամբ կը գտնուի նցնարէս մարդոյ մարմեցն մէջ , ատամշագուղիին և ուկիրաց մէջ :

Կալցիոն (calcium) նաոր (sodium) պոտասիոն (potassium) այն երեք մետաղներն ինքնօրէն չեն գտնուիր բնութեան մէջ իրենց գիւրաւ մանգահարման պատճառաւ : Նոցս մանգն , որը հն իր (chaux) պիլու (soude) եւ պոտաս (potasse) կը գտնուին իբրև աղ , թթուածներու հետ միաւորուելու յատկութիւն ունենալուն համոր : Այսպէս առաջ կը գան ահա ածխալիք (carbonate) ֆոսֆորիլու (phosphate) ծծմբալիք (sulfate de chaux) աղերն ,

աղբարկին (nitrate de potasse) կերպառը  
(chlorure de sodium) և այլն :

Այս բազդրութիւններէն քոյ  
ֆորմիթմաւն և ածխաթթմուն, նոյն  
ակէս կերակրազն կամ համարակ աղն  
ամնէն աւելի մեծ կարեւորութիւն  
ունին մարդկան, կենդանեաց և բու-  
սականաց համար :

Մագնիսիոն (magnesium) և ֆլե-  
սիոն (silicium)<sup>(1)</sup> համանմանութիւն ու-  
նին մեր թուած սպարզ մարմիննե-  
րու հետ, բայց խիստ սակաւ կը գրա-  
նուին մարդկային մարմինց մէջ :

Երկաթն, որ ամեն մեռազներէն  
աւելի շատ տարածուած է, մարդց  
և կենդանեաց մարմնոյ կազմութեան  
համար խիստ մեծ կարեւորութիւն  
ունի : Երկաթն կը խունուի, կը նոյ-  
նանաց մեր ներշնչած թթուածնի հետ,  
որ այնքան պիտանի է մեր կեանքին,  
որ ինչուան օդ կ'անուանի : Երկաթի  
և թթուածնի միաւորութենէն կ'ար-  
տագրի հեմալին (hématine) արեան  
կարմիններկ նիւթին, որ հիմն է բոլոր  
մարմինց գունաւորութեան : Երկաթն  
կը գանուի ոչ միայն կենդանական,  
այլ և բուսական նիւթոց մէջ, Բայց  
ամենէն աւելի կը գանուի արեան,  
կաթի և հաւկթի մէջ :

( Երրունութիւն :

(1) Այս բառերն զբա ամեն յառաջադէմ լ-  
զուներ ընդունած են : մեր եւս բարուոր համար-  
շնոր նշնութեամբ ՚ի կիր առնուել, միայն վերա-  
սորութիւններն փոփոխելով, մեր լեզուի յանկա-  
թեան յարմարութեան համար : Բնշպէս վարուած են  
շատ անգում մեր նախնի մասենացիրք : Այսպէս :  
փոխանակ պէտուամ կամ պէտում առելուած ենք  
պէտուն, նահնեսն, խունին և այլն :

## Խ Յ Դ Ի Ռ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՍՈՐԻԱՑ

Արդէն յայտնիէ թէ Վարքաց կո-  
թողիկոսութեան խնդիրն օրշանի բդ-  
բաղեցաց Աստր. Վթոսս և Վզդային  
կեղծնախան Վարչութիւնն : Այս  
խնդրոյն վրաց փոքրիկ գաղտփար մի  
տալու համար արժան կը համարմիք  
Տեսեւեալ Հանրագրութիւնն հրա-  
արակակել, որ թէ եւ անցած տարի  
պատրաստուած է, բայց պարզապէս  
ցաց կուասյ Վարքի ժաղափրուց յու-  
զու մներն ընդդէմ ներկայ Կաթողիկո-  
սին, թէ և Կաթողիկոսութիւնն վա-  
ւերացաւ Վզդային Վարչութեան ի-  
րաւաբանական միջտմտութք, բայց  
ինչպէս կերեւի ժողովրդեան որուերն  
տակաւին անդորրացած չեն և դա ցէ  
թէ նոյն Կաթողիկոսն իւր Վթոսս  
վերագառնարով պիտի ըս գանէ այն  
համակրութիւնն, որ կարեւոր պայ-  
ման է ժողովրդապետի իշխանական  
հաստատութեան :

Երդէն Երուսաղէմի նախինն Վ-  
սորի Եպիսկոպոսն, որ Կաթողիկոսի  
արգելմամբ մինչեւ ցայսօր կարող չըր  
յիշրուտաղէմ վերագառնար, ներկայ  
ամսոյս մէջ նկաւ և իւր պաշտօնն շո-  
րունակել սկսաւ, բաց ՚ի Հանրագ-  
րութիւններն բանիւ բերանոց եւս յայու-  
նելով որ ժողովրդն խիստ տժուհն է  
յիշեալ Կաթողիկոսէն և կարի ցաւ-  
դացած է որ ՚ի սկզբան ըմբռստ ձու-  
նապարհ բռնած է նա Հայոց աղդա-  
յին Վարչութեան դէմ, և մանա-  
ւանդ ընդդէմիրաւասութեան Երու-  
սաղէմի Հայոց Պատրիարքին, որ շարու-  
նակ պաշտպան և խնամակալ հանդի-  
ասցած է Վարքի կլերին Երուսաղէմ:  
Ժաղափորդն իւր Հանրագրութեամբ  
կը թափանձէ որ Ս. Վթոսս իւր խո-  
նամբներն շարունակէ տնիքնդ հատ ու

վերաւորելով երբէք Կամովիկասի յարացած ասպերախատ յաւզմունքնելէն . Արշափ որ մի կողմէն միսիմարտական է ժազովիտեան այն երախտագիտական զգացումն , միւռ կողմէն եւս տարած կօր ունիմք որ յետ վերագործի Կրթութիկոսին կռւսակցական յուզումնելն վերստին պատի շարունակին Կամովիկիոսի և Երաւառդէմի Հայիսկապոսին մէջ . Երանի թէ մէր գուշակութիւնը սմալ լինէր և անդորրութիւնը ամրէր երկուց կռւսակցութեանց մէջ , որով և Ա . Վթոռս ան խռով շարունակէր իւր պաշտպանութիւնն , զար շարունակած է ՚ի դաշեւոր ժամանսկաց անտի առանց իւրի ակնկալութեան :

Ա.ՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՍԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ  
ՄՐԲԱՋԱՆ ՀԱՅԻ  
ՍՈՒՐԵ ԳԱՐԵՇԱԳԱՅԻ ՈԽՆԵՄՑ ՀԱՄԲՈՅՑ

Ենոքհակալ եմք Զեր Արքազնութեան մարդասիրութենէն որ մ' ո աղդէ կը կը խնամէք կը սիրէք և աղդիս վանուց իրաւունքը կը սրաշտպանէք . գիտենք որ շատ կը սիրէք մէր աղդին քարերար և վանուց խնամածու Յարութիւն Արքազն Հայիսկապոսը , որ աղդակործան ինքնակոչ Կամովիկիոսէ մը կը հալածուի . և լսէլով առանց Վզգին հաճութեան փախանակ Յարութիւն Հայիսկապոսի , վարդապետ մը դրած զրկած է . որն որ աղդով զայն իրը փոխանորդ չենք ճանհնար . և այսքան աարուան Հայիսկապոսի տեղնատիլ չենք ընդունէր , խնդրէմք ՚ի ուր աղդութեան . մէր խնդրէր ընդունելով աշխատութիւն զոհէք : Վրդարեւ ունի Գեր . Յարութիւն Հայիսկապոսը իւր անդ փախանորդ այն ընդունելի է մինչև յիշեալ Հայիսկապոս ունի բանձնական տկարութէ ու ժողով

ցած իւր անդ վերագառնայ . բայց մէր խնդիրն այն է , որ մէր աղդին վանքը , տեղը , իրաւունքը բոլորը Զեր որոհպանութեան տակ առած խնամքը , տեսչութիւն ընէք , անհաւատարիմ վարդապետաց մասն չը մատեցը նէք եկամախց և գոյից . վտոն զի մէր ոչ Պետրոս եպիսկոպոսը իրը Կամուգիկոս կը ճանշնանք , և ոչ նորա յԱրուտողէմ դրկոծ վարդապետը փախանորդ կամ վերակոցու Յարութիւն աղդատէր Հայիսկապոսի պաշտօնին , միայն Զեզ , Արքազն Հայր , հաւատարմանթիւն ունիմք . ՚ի սէրն Պատրիարք ընդունեցէք մէր խնդիրն . մի թողոք որ անհաւատարիմ ձեռք աղդին իրաւանց մերձէնայ . արդեօք պիտի ըլլայ այն երջանիկ օրը , և սիստի լսէնք այն տեհատիր , որ աղդախնամ Հայոց Վարչութիւնը տղոտէ աղդերնիա ինքնակոչ խոռվարար Կամուգիկոցի ձեռքէն Տերութեան շնորհիւ , և կը յուսանք աշխատութիւն չէք դանար ատ մասին ալ մէզ օգնելու որ բողըքած ենք ՚ի Պատրիարքարանն Հայոց ՚ի կ . Պօլիս . Շնդունեցէք , Արքազն Հայր , այն աղերասգրիս , և պահպանեցէք Վարչուց Վզգին վանքը գոյքը որ յԱրուտուղէմ է , մինչեւ Գեր . բազմաշխատ Յարութիւն Հայիսկապոսը իւր պաշտօնին վերագառնայ :

Ո՞նամք սուրբ գործապարոցգ երախտապարտ :

1873 Դ Ապր. 11 .

Ա-րք :

Ա-րք Ա-րք :

կողմէն բառալ :

(Արտադրութիւն 40) :

ԱԱՆԴԻՄԱՆԱԹԻՒԽՆ ԽԱԲԵՌԱԹԵԱԿԱՅ

**ԶԱՐՈՒԽԻ ՀԵԱԿԱ**

Ապրդիկ կան , որբ անձնական ցած նկատումներսվ վառուած բորբոքած՝ իրենց նպատակին համար լու համար ամեն անարդ միջոյներու կը դիմէն և ամենայն զօրութեամբ կը պատերազմին . իրենց ամենէն զօրաւոր զէնքերն են ներդուիւն , իւրդախուիւն , լըարդուիւն և իւբէռուիւն . և իրենց ցժն ու կորովն է իմաստակութիւնը : Սօրա երբեմն կանկանին , հոգ չէ . երբեմն իրենց թեւը կը խորտակի , փոյթ չէ . գլուխնին կը ջախի ջախի , այն ուշ վնաս չունի . քանի որ շունչ կայ բերաննին միշտ կաղաղակին ու խառնաշփոթ կը ճշնին , ոչ թէ խօսք հասկացնելու , այլ դիմացինը շփոթելու համար . սօրա միշտ պատրաստ են՝ սեւին ճերմակի և ճերմակին սեւ սաելու , ճշմարտութեան սուտ և սրաւութեան ճշմարտութիւն է գումըւու : Դու կուզես ամեն տեսակ շշափելի փաստեր ճշմարտութիւններ թափէ , ապացցց մի թօղուր գլուխնին դիպէ , խայտառակէ , անարդէ , թուք ու մուր աեղա երեսնին . նորա ոչ ճշմարտութիւնէ կախնածին և ոչ խայտառակուելէ ամօթ կ'զգան . մոլեգնաբար կը յարձակին և յարձակումն կը բեցինք կամեն . փամսառեամբ զբեզ մնլորեցնելու և իրենց լարած թակարթը ձգելու կը ճգնին : Վերջապէս երկար , անօդուտ և ՚ի զուր տեղա լորուցիչ պատերազմէ մի վերջը եթէ նենքութեամբ և որոգայթուլ լինկճնլ կարծեն նոր հաւանոր եւ նոր գաւառ նութիւն կը պահանջնին . եթէ յաղթուին այլ նոյնապէս անամօթաբար , յաւ լեշնու , կը պոռան :

Առանկ է Տէրցինց Չամուռճեան պատուելին , որ կարծես ուխտած է

ազգին մէջ գրական ասպարէզն ելնող ներն հարուածել և անպատաւել . սուրա ժանեաց խածուածքէն միայն նորա տղատ կը մնան , որբ յայտնի կամ ծածուկ Հռովմի մսրդաբագինը կը խնիարկին : Առանկներուն հետ խօսքի բոնուելէ աւելի աղեկ է կամ արգահամասնօք նոցա ուղղութեան համար ազօթել եւ կամ իրենց պէս առանց ուղղակի սրատասխանելու չորաչար հարուածել . Բայց գմբախտաբար սուքա իրենց ձարպիկ ձամարտակութեամբը և նենգաւոր խաբէութեամբը յաջողած են խաբել հասարակութիւնը , նոցա առջեւ վարկ ու համարումն ստանալ և խօսքերնին իրեն անհերքելի սրատագամ ձանցնել : Այս առթիւ ախուր հարկ մի կը բռնագաւատէ զմեզ այդ չարամիտ պատգամախովի պատգամաց որպիսութիւնը չառաջ բերել և լուսոյ առջեւ հանելով խայտակել :

Այս աշխատութիւնը յանձն առ ոինք ոչ թէ Չամուռճեանի պատասխանած լինելու կամ զինքն համոզելու համար , ոչ . այլ առաւել հասարսկութեան կայթակղութիւնը ուղղելու և վիրաւորեալ զգ ացումները բժշկելու համար : Վասն զի Չամուռճեան գըլ կիւտանդութեամբ վարսկուած է . վասն զի նորա զրայարանաց կարողութիւնը խանգարուած են , վասն զի ինքն իւր հիւանդ լինելը չը գիտէր . վասն զի հիւանդութիւնը հետք ծերացած է . վասն զի ունակութեան որէնքը լաւ մը ամբապետած է վիրան և զայն թօթափելու ոչ փոյթ սրած է և ոչ կառնէ , և վասն զի Չամուռճեան անհամօղելի կամակոր մի է , որով յայտնի է թէ զինքն համոզիլ և միաբը բժշկել ջանալն անօտատ է . Արդ հասարակութիւն ուղիղ դաս-

մահ առաջնորդելու համար խօսքի նիւթ եղող խնդիրն համառօտ մի մէջ բերեմք :

Տէրոյենց տպատուելին ուրիշ մէկու մը 'ի պատասխանի Ա. գաստի ռակի պատմութիւնն արած ատեն ժռ շովի մը վկայութիւնը մէջ կը բերէ և զայն Տիեզրական կանուանէ : Ա.հա իւր բուն խօսքը . այս ժողովը Տիեզրական ժողովոց կարգը իբրեւ եօթներորդ յիշուած է մեր յայսմաւուրբն մէջ ալ . . . : Հիներուն պատմութիւնը և մէկ Տիեզրական ժողով մի . . . և այլն : ( տես հայրենիք թիւ 183 ) :

Սիօնի այն ատենի խմբագիրը պատուելցն յօդուածին մէջ այս եօթներորդ Տիեզրական ժողով խօսքը տեսնելով Զամուռաքանի նենդամութեաւ նը կը թափանցէ և քաջալանջ ճշմարիս Հայու մը զգացումը կրող սրտի արձանի արիութեամբ քանի մը տողով կը հերքէ և ցոյց կըտայ թէ Հայք Տիեզրական անուամբ միայն երեք ժողով կը ճանչնան : Ա.հաւասիկ Սիօնի բուն խօսքերը . և Տէրոյենց պատուելին . . . եօթներորդ Տիեզրական ժողով մի կը յիշէ . . . մեր Եկեղեցին բաց 'ի երեք Տիեզրական ժողովներէ . . . ուրիշ Տիեզրական ժողով մը ըստ ճանասէր , ոչ թէ ըստ պատուելոյն եօթներորդ Տիեզրական ժողով մը . այլ ըրրոտ մը իսկ ընդունելու համար այնշանի զոհեր տրած է Յունական և Լատինական մոլեուանդ հետամութեանց և մինչեւ յարդ կը տայ ո : ( Սիօն . փետր . ) :

Խնդիրն իւր խկութեամբ այս է ահա այս խօսքերէն յայսնի կը տեսմը ւի , որ Սիօնի խմբագրին նպատակն ուրիշ բան չէ եղած բայց միայն ցոյց առաջ թէ Հայոց Եկեղեցին երեք Տիեզրական ժողովներէ զատ ուրիշ Տիեզրական ժողով ընդունիր . Թէպէտ արեգակն աւ յայտնի է , բայց աչք ունե-

ցովները կը տեսնեն . բայց արդ արեւ Պատուելոցն աչաց մէջ Վատիկանի խոշոր գերան մի մոտած և տեսութիւնը բոլորովին բռնած է որ այսշափ անգամ կրկնուած Տիեզրական բառերը ըստեմներ և կամակրրութեամբ ու նենագաւոր իմաստակութեամբ Սիօնի խօսքը կը թիւրէ ներա մէջէն Տիեզրական բառը կը վերցնէ և սապէս հեգնական ձեւով մը կը ներկայացնէ ընթերցողաց « Հայոց Եկեղեցին երեք ժողովէն զատ ուրիշ ժողով ընդունիր եղերո : Ա.յս պէս խարդախութեամբ խնդիրը մի այն ժողով բառին վերայ կը գարձնէ և կըսկսի Հայոց Եկեղեցին ուրիշ Ա. ժողովներ ալ ընդունելը հաստատելու համար աւելըրդ և անկարեւոր ապացուցութիւններ մէջ բերել , որոց վերայ ոչ խնդիր կայ և ոչ տարակցոյ . այս փաստերու կարգին մէջ իւր գրե խաւոր զրութիւնն եղող Յայսմաւուրբիի վիայութիւնն ալ յառաջ կը բերէ , բայց այն տեղ եւս Տիեզրական բառ ըստ դատնուելով խախիքութիւնը երեւանն կելնէ : ( Հայրենիք թիւ 193 ) :

Ա.յս յօդուածին մէջ պատուելի Տէրոյենցը իւր անձին արժանաւոր չարամութեամբ խնդիրը Տիեզրականն վերցնելով և Ա. ժողովի վերայ գարձնելով զանազան զըսպարտութիւններ կ'առնէ , Սիօնի խմբագրին հաւատքը կը քննագատէ , գերեզման կը կրկտէ և կամացուկ մի Քաջկեդոնի վիճած ժողովն ու այսշանի գայթակղութիւն տալուն առթիւ հաւատար կոչուած Լեւոնի տումարը մէջ կը բերէ , գիտնալով որ արդէն գրգուուած Հայու զգայուն սիրտը ըստ պիտի կրնայ տոկալ այդ պիտի անուններուն առջեւ և պիտի ստիպուի պատասխաննել : Ա.յն ատեն Պատուելին թեւերը վեր առած սաւանայական խնծղանօք պիտի խազայ իւր խսբէութիւնը ծածկաւելուն եւ

նպատակներուն համար, (Այս պարուգայիս մէջ իւր նպատակն է, ինչպէս յօդուածներէն կերեւի, հին խորցիլը քրրելով նոր հրդեհ մի յարուցանել Հռովմի տւաղակաց քիչ մի տւար եւս հանելու համար): Բայց Միօնի խմբագիրը թէպէս երիտասարդ հասակաւ, սակայն հասուն մաօք և կատարեալ խոհեմութեամբ Ապրիլ ամսաթուալ անհանկ արդար բանաւոր ձիշդ պատասխաններ առւած է որ եթէ Զամուռձեան երեսը ծեփած չը լինէր եւ պատիկառանք ունենար անշուշո պիտի ամանչէր և եթէ Հայուսիրտ ունենար հարկաւ պիտի զգար որ ինքն Հայաստանեայց ուղղափառ սուրբ, Կաթուղիկէ, առաքելական Եկեղեցւոյ հարազատ որդիւութենէ զգուած է: Բայց պատուելի Տէրոյնցը ոչ երես ունի ամսութելու և կոչ սիրտ ունի զգալու: Վասն զի իւր նենգու պատիր խաբէութեանց այսապի խայտառակուելէն վերջը նորէն Հայրենիքի 200 թուոյն մէջ բուն խնդիրը անհամօթարար կուզէ մոռցնել և Քաղէ կեդոնի վերայ Միօնի խմբագրին դաւանութիւնը կ'ուզէ Առաքելցն պատուերովն ալ կը յորդորէ որ “Պատրաստ լինիմք մեր յուացն համար եղած իուգը հարցանողներուն պատասխան տալու”: Այս տեղ Ս. Գրոց խօսքն ալ կը նենդէ: Վասն զի միթէ չը գիտէր Պատուելին որ մեր Եկեղեցւոյ զաւակաց յօյոը ոչ Քաղէեղոնի փառամոլ ժողովն է, ոչ Լեւոնի պիղծ տումարը և ոչ Յունական ու Հռովմէական քմահաճ ժողովներու ընդունած ինքնահնար դաւանութիւնն է: այլ մեր Յոյոը միմիցն Յիսուս Քրիստոս է, և մեր հաւատաց դաւանութեանց հիմք նորա Ս. Կատարանն է եւ անոր ուգուալ դրուած մեր նախնի հոգեկիր Հարց խօսքը մէջ առաջ-

նորդ: ուսամի ատանկյուսահասեցուցիչ խնդիրներու վերայ իրեն ակէս նենդ գամիտ հարցանողի պատասխան տալու հարկ և կարեւորութիւն չը կար: Աղեքսանդրոս գարբիններէ անձնապահ լինիլ պէտք է:

Սակայն Միօնի խմբագիրը Յունիս ամսաթուալ այս յօդուածին ալ պատասխանած է զօրաւոր կերպիւ: Պատուելոյն փախտեան շաւիղը բռնած և զայն բուն խնդրոյն դառնալու հըրաւիրած է: Իսկ Պատուելին իրեն ըլնական եղած պատրիչ Ճարպիկութեամբը և խորամանկ Ճապուկ գալարումներովը այս անգամ դարձեալ սողալով գուրս ելեր և Հայրենիքի 214 թուով իրը թէ պատասխան կը տայ: պատստիան մի, որ արդարեւ բարեսէր ողջամիտներու արդար զարցոյթը կը շարժէ: Տէսնենք ուրեմն այս վերջին յօդուածն ալ:

Տէրոյենց կ'ասէ թէ և Մեր իրնդիրը Պատստուակի խնդիրն էր Ս. Մեր և Միօնի խմբագիրը կ'ասենք թէ այդ խնդիրը ուրիշ մը իրը ՚ի պատասխանի գրած էր ո: և Միօնի խմբագիրը դորամիջամսելու պարտաւոր չէր կամ հարկ չէր տեսնէր: պատուելին իւր հակառակորդին դէմ Ս. Պատստուակի ըուտուգութիւնը հաստատելու համար յառաջ բերած փաստերէն կամ վլայութիւններէն մէկուն ոյժը աւելցընել ուղելով եօթներորդ: Տիեզրական ժողով ըսած էր: Միօնի խմբագրին նիւթն ալ այս եղած էր, ինչպէս վերը տեսանք: (ուղղով կարողէ Հայրենիքի և Միօնի նշանակեալ թիւերը աչքէ անցընել և Պատուելոյն ոգւսյն աւելի լաւ թափանցելով ինքնին ևս նորագատավճիոր տալ): Իսկ Տէրոյենց Պատուելին առանց իրեն եղած առարկութեան պատասխանելու շարտմը տութեամբ մը խնդիրը մոռցնել տալ

կուզէ որ իւր նենդժառ զլովարտութիւնները յառաջ տանի եւ թերեւս այժմ իւր իմաստակ մոքալը յաջողել կործածէ . եւ յիրաւի կերպիւ իմն յաջողած ալէ , քանզի նորա ջանքն է որ և իցէ եղանակաւ իւր սրախն թայնը հրապարակ թափել , հերիք է որ շատ մարդիկ կարգան , հարկաւ անոնց մէ ունակը կը կրեն իւր ազգասպան թայնին ազգեցութիւնը , ասոր համար հոգը չէ ինչ ալ որ ասուի , ինքն յի մար ձոռնին պէս ցատկաւելով եւ լրածոնքը թափելով աննկատ յառաջ կ'երթաց . ինչպէս ահա այս անդամ իւր այս վերջին յօդուածով առանց աջ ու ձախ նայելու զլովարտած է թէ Ախոնի խմբագիրը , թէ Կ . Պոլս սոյ կրօնական ժողովը թէ Շանշեանցի պէս առաքինի բարեկաստ և արժանաւոր հեղինակ մի և թէ Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ իրաւանց և պատուցն նախանձախնդիր շարու . նակ նահատակութեան մէջ գտնուող սուրբ Երուսաղէմի վանքը , ուրիմն և մէք այս վերջին յօդուածին արժէքն ալ համառօտ մի ցոյց տամբ հասարակութեան :

Զամուռանքեան (1) Տէրոյենց պատուելին ընդդէմ ճշմարտութեան կը խօսի երբ Հայուննիքի 214 թուցն մէջ Ախոնի խմբագիրը ստախոս կ'անուանէ . վասն զի այս խօսքով Պատուելին թէ ի զուր կ'անպատաւէ և թէ սուտ կը խօսի . պատճառ որ իրեն և Ախոնի մէջ

(1) Պատուելի Զամուռանքեան Տէրոյենց Տէր կարստեան Պուռացի Յոշաննէս վարժապետն իւր ուսուագրութեան մէջն Զամուռանքեան անունը պակասուցած է Եղիք . (լոյն ինչպէս մէք , կ'երեւ մէ թէ Ախոնի խմբագիրն ալ նշանքս ու շաղբութեան չէ առած) . և այդ անաւուը մէտուիք իւրն անպատճեան չէ Եղիք . ուղղով թող այնպէս համարնի . առ յարսնի բան է որ ընդհանրացած ճանշուած և իրեն արժանի անունը Զամուռանքի անունն է :

բնաւ Ս . Գառատառակի պատճեան թիւան վերայ խօսք բացուած չէ . այդ ինդիքն ուրիշի հետ է . Ախոն սկսու ճիշտ այն ինդրէն որ կը վերաբերի Հայոց Եկեղեցւոյ եօմենութիւնորդ Տիեղերական ժողով ընդունելուն կամ ընդունելուն . Ախոն այս կետին կարեւորութիւն արւած և գրեց . Տէրոյենց առաջինն պատասխանութեան ուղղեց հաստատել թէ Հայք Եօմենութիւնորդ Տիեղերական ժողով ալ կ'ընդունենին , բայց ապացոյց ը գտնուելով խարեւութեամբ ինդիքը փռնեց և լոկ Առաք Ժողովի վրոյ գրեց . զայս այսպէս առնելով իմաստակութիւն էր . Ախոնի խմբագրին կողմէն սորա արժանաւոր պատասխանն ընդունելով ը յաջողեցաւ իւր նենդութեան մէջ . Աւատի և այս անդամ ինդիքը նորէն փոխեց ասելով թէ « Բաւն իրեն գիրը Տեառն մերց առ Արքար թագաւոր ղրկած Ս . Գառատառակին պատճեան ստուգութեանը վրայ է » : Բայց ինչպէս ընթերցողը մեր յաճախ կրկնութենէն աեսան , որ Ախոնի և Տէրոյենցի մէջ բացուած իրենդիքն այդ չէ , այլ ո՞րու հասպարութեան համար Դիացուին մէջ բերած ժողովը Տիեղերական կը լինելու պահանջման մէջ այժմ ընթերցողը թող վճռեն թէ սուտը ովէ ։

Երկար ժամանակէ ՚ի վեր ապացուցուած ճշմարտութիւն մի է որ Տէրոյենցը վիճականութեանց մէջ իւր նշանաւոր իմաստակութիւններովը սոսկարի խարդախ և զուրշալի խարերաց մի է . եթէ ընթերցողը անցեալը ը յիշելով տակաւին ապացոյց կ'ուղէ , թող մարի լոնէ :

Տէրոյենցի խելքն հասաւ որ իւր միշած ժողովցն Տիեղերականութեանը կը լուսու ը կայ , փախանակ անկն զծութեաւ առնելու , այս անդամ Ճարպի կութեամբ մը թէ կը վախիչ և թէ

բար կը նետէ . կոմ թէ իւր խօսքովն ըստնք , — Ամ քաջար հեմ տավուշ չալորտեհատիկն անուղղակի ետկ' առնու և դարձեալ հաստատել կը ջանոյ . տեսէք ինչպէս կը խօսի . “ Ճողովը թէ Տիեզերական ըլլայ թէ ըլլայ ժողովքին բաղմաթիւ եպիսկոպոսներուն վիայութիւնն էր մեզի պէտք եղածը . . . : Մենք ժողովը եօմներորդ Տիեզերական ժողով ըստնք ինչպէս որ գտանք առաջուց ՚ի վեր եկեղեցիները կորդացուած Յայոմաւուբրին մէջ տպուած ո : Այս տեղալ սոււտ կը խօսի Տէրոյենց . վոսն զի թէ Յայսմաւուրին մէջ Տիեղերական բառը ըլլ կայ ինչպէս իւր տպել տուած յօդուածին մէջ բերած վիայութիւնէն ալ կը տեսնուի , Հայրենիք թիւ 193 , և թէ նոյն ժողովը ի՞նքը գիտութեամբ Տիեղերական անուաննել ուղած է որ վիայութիւնը կարեւորութիւն առնու եւ կարգը Քաղիեգոնին բերէ . ուրիմն կը ստէ ասելով թէ Տիեզերական լինի կամ ոչ և այլն . կը խորէ երբ կ'ատէ թէ Յայսմաւուբրին մէջ այնպէս տպուած դըտանք , և այլն . Ուրիէ յայտնի կը տեսնուի Տէրոյենցի հետեւեալ զրաբարտութեանց արժէքը և ինչպիսի սրտէ յառաջ գողը : 1 . “ Սիօնի խմբագիրը առոր կարեւորութիւն սոււաւ որ Ս . Դաստառակի ինեղիրը իւր ընթերցողաց մոռցնէ . ո : Սոււտ կը խօսի Տէրոյենց . քանիզի բուն կարեւորութիւն տալու կէտն ալայդ էր : 2 . “ Սիօնի խմբագիրը Եկեղեցու ընդունած այս բանը (ժողովցն Տիեղերական լինելը) ընդունիր եղեր : Սոււտ կը խօսի Տէրոյենց , վասն զի Եկեղեցին նոյն ժողովը Տիեզերական ընդունած չէ , որ Սիօնի խմբագիրն ալ ընդունի : 3 . Սիօնի խմբագրին չ'ասած ու չը հեղբած բաները իւր եղած և կատարուած ծանօթ բաներ նորա վերայ կը առորդաւէ և իւր հետեւու-

թիւն զայն Հայաստանի ույլ Ա. Եկեղեցւոց վարդապետութենէն հետազ կ'անուանէ . որով միշտ կը ստէ և կը զրապարտէ :

Ասէէ կ'անցնի և Քաղիեգոնի ժողովցն վերայ պատասխան կուզէ . իւր թէ այս ինեղիրը Եահնաղարեան Կարապետ վարդապետին ալ հարցուցած է եղեր և իւր թէ օրինաւոր սրատասխան չէ ընդուներ եղեր . Մենք թէ ողիտ հարկ չէ մք տեսներ զուր ժամանակ վատնելով իրենց այն ատենի վեճաբանութիւնը քննելու , սակայն կը ձանաշնչմք հանգուցեալ բարեյիշատակ Եահնաղարեան Կարապետ վարդապետը իւր հմտութեամբը և գիտեմք որ Տէրոյենցի տղմտութիւնն առաջ մընացող չէ . Եթէ հանգուցեալը խոհեմութեամբ իրօք ուղղակի սրատասխանած չէ , սակայն անուղղակի կերպիւթելու պատասխանած է ։ Նար — Հայ պատմագրացը հրատարակելով : Խոկ Սիօնի խմբագիրը սրատաւոր չէր եւ չէ պատասխանելու . քանզի հարցանողը նենգութեամբ հարցուց , քանզի հարցութիւնը խնդիրէն շատ ու շատ հեռիէ , և քանզի արգէն բիւրաւոր անգամ պատասխանուած է :

Տէրոյենց նշանաւոր խմաստակ Պատուելին խօսքը ծամածուելով կամացուկ կամացուկ յառաջ կ'երթայ , իւր զիմախօսին բերանը խօսք կը դնէ . եւ ծարտար թուլչի մը պէս թմբեցնել կ'աշխատի . որպէս զի զայն եւս խընդիրէն հետեւացնէ . իւր խմաստակութեան մեծ օրէնքուլը — կոչման խարեւութեամբ — տարօրինակ զապարտութիւնի կ'առնէ որով իւր չափն ու արժէքը ցոյց կը տայ աշխարհի : Բացատրենք :

Բարեսէք եւ ծմարդիտ Հայ Քրիստոնեայ Պ . Եահնշեանցի Քրիստոնէականը ասալին անդամ Ա . Պօլսց Աւ-

բօնական ժողովց քննութեամբ եւ  
Ս. Պատրիարքի վաւերացմամբ տրպ-  
ուած էր ՚ի Պոլսա . Տէրոյենց այն ատեն  
իւր նախանձէն գրգռեալ չարամիտ  
քննադատութիւն մի ըրաւ ճիշտ Զօ-  
յիլեան ոգւով . որուն արժէք անդամ  
ըստրուցաւ . իսկ այժմ տեսնելով  
որ նցն ընտիր իմաստալից եւ պատ-  
ուական աշխատասիրութիւնն Ս. Երու-  
սաղէմի տպարանէն կրկին հրատարա-  
կութեան արժանացաւ , կը ջանայ նո-  
րէն մըստել եւ անպատիւ ընել . սա-  
կայն ճշմարտութիւնը լցու է և չը ծած-  
կուիր տեսնող աչքերէ . իսկ իսարդա-  
խին ճրագը մինչեւ կէս գիշեր կը վա-  
ռի :

Այս դասագրքին ազնուութիւնը  
և ուղղափառութիւնը սղջմուութեամբ  
ընթերցող մանաւանդ քրիստոնէական  
ոգւով գաս տուողները աւելի լաւ  
կրզգան . իսկ Տէրոյենց պատուելին իւր  
հիւանդամուութեամբ նորա խօսքը ամ-  
բողջուուցիչ մասերը կը վերցնէ եւ  
միայն մէկ մասը յառաջ կը բերէ որ  
ընթերցուոց աչքին մօսիր փշէ և իւր  
խարէսութիւնը յառաջ տանի :

Նախշանցի Քրիստոնէականին խօս-  
քըն այս է . Քրիստոսի մէջ երկու բը-  
նութիւն ուէտք է խստառվանիմբ -  
Աստուածային և Տարրէային անշփոթ և  
անբաժանելի միաւորութեամբ . (Կողեալ  
յԵրուանէմ, Երեւ 92) : Հայաստանեայց  
ուղղափառ ոուրբ Եկեղեցւոյ դաւա-  
նութիւնն ալ այս է . այսինքն անշփոթ և  
անբաժանելի միաւորութեամբ մի բնուիւն ,  
իսկ Տէրոյենց՝ կամաւ կուրացած՝ այս  
խօսքին մէջէն անշփոթ և անբաժանելի մի-  
աւորութեամբ բառը ըստ տեսնելու զար-  
նելով կրթնական ժողով մի , միարա-  
նութիւն մի , երկու Պատրիարքներ և  
արդիւնաւոր հեղինակ մի հերեաթիւս  
կ'անուանէ , առանց յիշելու որ ինքն  
իսկ է հերեաթիւս , ինքն է Հայաստա-

նեայց Եկեղեցւոյ վարդապետութեան  
հեստողը , ինքն է Ճշմարտութեան հա-  
կառակողը և ինքն նկովուած է ՚ինստի-  
նեաց . եթէ Քաղիեզ ոնք Շնորհունի  
իբր ուղղափառ :

Տէրոյենց եթէ գործ չունի տակու-  
ւին թող խնդիրներ փափախէ , տակու-  
ւին թող Քաղիեզ ոնք անհարազատ  
ժողովին վերայ դաւանութիւն պա-  
հանչէ , տակաւին թող անխողճաբար  
ու ու ան մըսուէ . ահա ինչպէս աշք  
ու խելք ունեցողները մեր պարզա-  
բանութենէն յայտնի կը տեսնէն որ  
ոչ Ախօնի խորացիրը հեստող է և ոչ  
Քրիստոնէականի հեղինակն ու զայն  
տպել տուողներն հերեաթիւս էն . այլ  
նա ինքն Տէրոյենցին է հերեաթիւսը , որ  
չէ դադարած շարունակ իւր մօր - Հա-  
յաստանեայց ոուրբ Եկեղեցւոյ և նո-  
րա հարազատ որդւոցը գէմ զինել , և  
այն նենդութեամբ խարէսութեամբ և  
դիւական դաւաճանութեամբ : Միթէ  
չը գիտեր Տէրոյենց որ ինքն այդ կեր-  
պով դաստագրարուուած է Յիսուս Քր-  
իստոսէն և նորա Արքազան Առա-  
քեալներէն , որք ստախօսը սատանաց  
կ'անուանեն . Եթէ ինքն հաւատոք ու-  
նենար պէտք էր նախ իւր ողորմելի  
վիճակը քննէր ճանշնար եւ մինչեւ-  
ցարդ արած խարէսութեանց եւ տը-  
ւած գայթակցութեանց դարման տա-  
նէր : Ասանկ անձ մի որ Աստուծոց ի-  
րեն տուած շնորհքը այսպէս խարէ-  
սութեամբ չարացար կը գործածէ . խիստ  
վտանգաւոր է և ընկերականութեան  
մէջ ժանտախտ մի է :

Խօսքս վերջանելու ատեն հարկ կը  
համարիմ ասել որ Տէրոյենց իւր ու  
վարական նրբամուութեամբը մեր ե-  
րակն ու լեզուն ալ զննելով դեղ ու  
դարման ընել պիսի ուղէ . բայց մենք  
մեր ցաւն իրեն յայտնելին վերջը դեղը  
դիւրին է և միմիսն ճշմարտութեան

գեղարանը կրնայ գանուիլ . այն է ,  
սպարզապէօ խոստովանիլ որ իւր յի-  
շած ժողովը Տիեզերական չէ . այս է  
մեր հրւանդութեան մէկ հոտիկ զե-  
զը եւ ասով կը տեսնուի իւր ճշմա-  
րիա ճարտարակութիւնը . բայց եթէ  
ասէ գուրս ուրիշ բան խօսի , սպա-

տասխանը միշտ հարռուած պիտի լինի ,  
ուստի այն ատեն իրաւունք չունենար  
յարձակաւմն անուանել մեր իսպե-  
րը , որ իւր գաղտնի յարձակմանց և  
որոգայթաւոր հարռուածոց գէմ պաշտ-  
պանողական յայտնի հարռուածներ են .  
Ո. Ա. Ուրիսեան .

## ԳԻՏԵՔ ԶԻՆՉ ԱՐԱՐԻ

Յով . ԺԴ . 12 .

**Գիտէք** զոր արդէն արարի 'ի ցոյց՝ սիրելեացդ իմոց .  
Դուր արկեալ 'ի կոնք՝ ձեռօք սրբեցի բիծ յոտից ձերոց .  
Չեղ խօնուր հութեան՝ այսու զկաննն՝ նոր աւսնդեցի ,  
Աւսարութ առնել մէր անկեղծ զնոյն ընկերաց ձերոց .  
Հարցէք , սիրելիք , թէ առ Բնէ Տէրդ հաստիչդ համայնից ,  
Կենջակ սփածեալ հողոց լուանալ խօնարհի ոտից .  
Սովաւ զիտշի առ ՚ի ձէնջ մաքրեալ ստուերականին ,  
Տամ ձեզ արշաւել նորոյս 'ի շաւիլ որ հանէ յերկին .  
Հարցէք ինձ թէ էր , ազտեզի ոտից՝ չար աշակերախն ,  
Խուանալ զիջեր ձեռօքդ եւ բացեր զ՚ի ծնէ կուրին .  
Սովաւ եւ զձեզ կամեցայ վարժել ընդ չարին բարի ,  
Եռնել ում փութայ՝ զձեզ 'ի ժանիս մատնել ոսոխին ,  
Գիտէք սիրելիք՝ Արարիչս սյսօր երկնի եւ երկիրի ,  
Ծառայիցդ ոտից՝ լուացման նստիմ սիրով անմժերի .  
Օն յայսմհետէ վեհադոյնն 'ի ձէնջ կրտսերոյն պարտի ,  
Տանիլ յարգանաց՝ առ որ իսկ Տէրս զայն արարի .

**Հարցէք** , սիրելիք՝ Պետրոսի ճերոյն թէ խորշիս զմէ .  
Ոտիցդ որոց պէտք են մաքրութեան 'ի լուացմանէ .  
Թէ ոչ մի անդամ , մատուսցես զոտսն , հուապ յոյս յաւագան ,  
Արդաժին մնայ՝ ձրիցն որ յինէն ասեմ յամենայն .

**Գոգջէք** Յուդայի՝ թէ առ Բնէ 'ի սէր ընջնն արծաթոյ ,  
ՕՏէրդ ճեպես մատնել ապիրատ՝ մշակացն սյգւոյ .  
Արդարեւ եկի՛ մահուամբ ճողոսպրել զազգն մարդկային ,  
Բայց գոլ դաւաճան՝ բարունւոյս բազմայ նմա անկ չէն .

**Մատերութ** 'ի ճաշ՝ հնայ օրինաց՝ գառին զստկական ,  
Արց 'ի լրման ձեզ նոր ունիմ տալ խորհուրդ Փրկչական .  
Օհաց եւ գինի զմարմին եւ զարիւն իմս իսկական .  
Որ քուիլ մեղաց՝ ճաշողաց զնոյն լիցի 'ի յապայն .

Լարադիդ Յագրագունկան .

ԿՐԹԱՐԱՆ  
ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ  
Դ. Ա. Պ.

ԱՐԱՆ ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԵՆԱՆ

“Եւ մինչեր ՚ի թեթանիայ ՚ի տան Սկսմանի բոլոտի բաղմեալ, ենին կին մի որ ուներ շիշ խւզոց նարգեան ազնուի մեծագնոյ, և բեկեալ զիշչն եհջ ՚ի վերայ դլսոյ նորա: Եւ աշակերտին զարելին և տաէին. Ընդէր եղեւ կորուստ իւզգդ այդորիկ: Մարթէր զայդ իւզ վաճառել աւելի քան երեք հարիւր գանեկանի, և տալ աղքատաց, և զայրանային նմա յոյժ: Եւ Յիսուս ասէ յնասա. Թոյլ տուք դմա՝ զի՞ աշխատ առնեք, զի գործ մի բարի գործեաց դու յիս: Յամենայն ժամ զաղքատո ընդ ձեզ ունիք, եւ յորժամ կամիք՝ կարող էք տոնել նոցա բարիս, այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք: Քա զըր ուներդ՝ արար. յառաջագոյն խնկեաց զմարմին իմ ՚ի նշան պատահաց: Ամէն առեմ ձեզ, Ուր և քարտղեացի Աւետարան այս ընդ ամենայն աշխարհ, և զըր արար դա՝ խօսեացի վասն յիշատակի դորին: Մոր. ՓԴ, Յ-9:

ԱԻԵՏԱՐԱՆՆ շատ կը տորբերի միւս պատմութիւններէն: Ինչոր միւս պատմութիւններն մեծ փութով կը հաւաքեն, Աւետարանն կը թողուզյն, անտես առնելով, իսկ ինչոր միւս պատմութիւններն կ'արհամարհէն և կը թողուն, Աւետարանն կ'ամփամիէ զայն մեծաւ փութով: Քանի քանի մեծամեծ անցքեր կան, Յիսուս Քրիստոսին ժամանակակից, օրոց մասին ըստութեամբ անցած է Աւետարանը: առկայն պրագործած պահուա-

զոր ձգեց նու ՚ի գանձանակին ովզուն: Յիսուս Քրիստոս կամեցան նոեւ որ մինչեւ ՚ի կատարած տշարհի յիշուի Եկեղեցւոյ մեջ այն աղիւ իւզգ յիշատակին, զոր Մարիամ հենեղ ՚ի զլուխ Փրկչին:

Յիսուսի Քրիստոսի խօսքն կատարուեցաւ ամենայն լրութեամբ: Աւետարանն տարածեց ամեն ուրեք այս կնոջ յիշատակին, և ինչպէս որ Յիսուսի բարեկամ Պաղարու տունն, նոյն պէս եւ Եկեղեցին՝ Աստուծոյ տունն լցուեցաւ անուշահոտութեամբ աղնիւ իւզգն:

Սոյն կնոջ համար, սոյն կնոջ պատւոյն համարէ, որ պէտք է պահպանուի այս պատմութիւնն: բայց ՚ի հարկ է նոյնպէս կը պահպանուի եւ մեզ համար: Վասնչի ինչպէս կարելի է կարծել թէ Աստուծոյ պատմուեց մի գործ, որ արժանի չէր պատաւաց: Ի՞նչպէս կարելի է կարծել թէ ինչ որ պատւոյ արժանի է յաջս Աստուծոյ՝ օգուտ չէ նաւեւ մեր հոգեւոր զինութեան համար: Աւետարանի մէն մի պատմութիւնն, մէն մի գիտուածն, մէն մի գիծն, իւր գործաղրութեամբ, է ՚ի վիսու Աստուծոյ և ՚ի շնուրթիւն հոգւոց:

Մի որոնմաւթիւն կայ միայն, որ չէ ՚ի վիտոս Աստուծոյ եւ ՚ի շնուրթիւն մարդկան, զոր կարդալով իսկ կը բորբոքիմք, իսկոյն կ'օւզեմք դատապարակ այն անձնիքն, զոր կը տեսնեմք յանգիմանուած Յիսուսին, և այս մասին հարկ ըլ կար մինչև անգամ որ Աւետարանն յայաներ թէ նոցա արանիման գործին Յուղաներ. հարկ ըլ կար որ մերկայնէր այս անարդան աւարելցն գաղանի շարժառիթն: Միք արդէն կը դառնապարակնմբ, որպիշեաւ Յիսուս Քրիստոս դատապարակեց, եւ այս շատ բնականէ: Ասկայն եթէ մեր

վենէինը տռաքելոց տեղ, միթէ առաջ  
մին անգամ այնպէս պիտի ըլխօսէինը,  
ինչպէս նոքո խօսեցան :

Միթէ այսոր իսկ, հաղպատաւոր առարձնելու մէջ, չենիք խօսիր նոցա  
պէս : Մեր դարն որ հետամատէ ոգ,  
տափարութեան եւ անտեսագիտու-  
թեան, միը դրական գարն, ինչպէս  
կը սիրեմք անուանել, միթէ Յուգոյ-  
էն տւելի լաւ պիտի ըմբռներ ոցն ա-  
նօդուտ հեղումն իւզցն և ոցն մեծա-  
գին պատիւն : Տարակոյս ունիմես, որ  
մեր դարուն մէջ, մարդիկ փօխանակ  
զարմանալու մարդկութեան բարեկամ՝  
Յիսուսի կարեկցութեան վրայ և ըս-  
քանչանալու, որ հայերն բազմացոյց  
ի կերտկուր հաղարաւոր նքթելոց,  
թերեւս պիտի զարմանան մնացորդ  
կոտորներն ինայսպատթեամք ժողովե-  
լու աշխատութեան համար : Ուրիշ  
մըն ինչպէս կարելի է որ այս վայրկե-  
նական բերկութեան համար յանօ-  
դուտա թափուած իւզն և բեկուած  
չին հաճելի լինի այն անձանց, որոնք  
շտո անգամ հցակապ տաճար մի տե-  
սած ժամանակ կ'ատեն : « Ափսոս այս  
քան աշխատանքին և կորսուած դրա-  
մին ։ Քանի մի սերւնդներ աշխատեր  
են ոցն հցակապ չենքն բարձրացնե-  
լու և տակաւին աւարտած չին : Ի՞նչ  
է այս . ինչու համար այսքան աշխա-  
տանք : Աստուած ըլք բնակիր ձեռա-  
գործ տաճարաց մէջ, մի անշուք չի-  
նուածն եւս բաւական է : Ապատաւ  
նարան, պատշաճաւ որութիւն, և ւ  
տմիսափումն մտաց, ահաւ ամենայն  
քան . ինչ պէտք են ուրիշ շքեղու-  
թիւններն : Գեղեցիկ տաճարն մի գե-  
ղեցիկ բան է . բայց գեղեցիկն կորե-  
ւորաց կարգը չէ . Հաղպատաւոր աղ-  
քանինք կան, որ կարեւոր կարստու-  
թիւններ ունին և կ'աղջաղակին : Պէտք  
է դադարեցնել նոցա տղաղսկներն ,

և ահաւ այն ժամանակ մեք տաճար-  
ներ շինած կը լինիմք . Երբ աղքատ-  
ներ չեմք ունենար, այն ժամանակ կը  
լինեմք, եթէ պէտք են, մեծամեծ տա-  
ճարներ ո :

Կը տեմսեմք ահաւ, որ մեր Փրկիչն  
խկապէս միայն առ արեալներն չէ, որ  
կը յանդիմանէ, և նորա պատասխա-  
նըն միայն Մարիամի արարքն գովա-  
բանելու համար չէ : Նա կը ներէ քան  
թէ կը ջատագովէ : Նա կարեւկցութիւն  
կը խնդրէ Մարիամին համար քան թէ  
ներբողներ : Նա կը պատուէ միայն  
Մարիամի դիմաւարութիւնը : Ուրեմն  
խնդիրն ամենեւին Մարիամի արած  
պատուց ձեւին կամ նիւթին վրայ չէ .  
այլ նորա սրտին կամ նպատակին : Փրկ-  
իչն կը փափաքի միայն որ ըլ վատացը-  
նեն այն կինն . վասն զի այս մարդա-  
սէր Տէրն կ'ասէ թէ՝ Մարիամ Գոյծ Ք-  
բայի Գոյծեաց յն :

Արդեօք ոցն գործն ամենէն լան  
էր իւր նիւթոյն և ձեւին մէջ . Ար-  
դեօք նոյն ժամուն և նոյն գրութեան  
մէջ ամենէն յարմար և վայելուն ոցն  
գործն էր : Այս մոտին ըլ խօսիր մեր  
Փրկիչն . այլ մի բան միայն կ'ասէ .  
« Գործ մի բարի գործեաց դա յիս ու  
Քննեմք այս ինսպերու իմաստն և ամե-  
նէն առաջ ուշագրութեան առնումը  
վերջն խօսքերն : Մարիամի արած գոր-  
ծըն բարի էր Յիսուսի Փրիմատոսի նլ-  
կամամամի : Այս չասէր բնաւ, և է  
գործն բարի էր ինքնին, այլ թէ բա-  
րի էր Յիսուսի իրեն նկատմամբ : Ի՞նչ  
կամի արդեօք հասկացնել այսու : Այս  
է արդեօք Յիսուսի չափն եւ կշիռն :  
Սոված կը կը և կը գնահատէ որ և  
իցէ գործոց բարի լինել : Բաւական է  
արդեօք որ մի գործ բարի լինի միայն  
այն պատճառաւ, որ Յիսուսի նկատ-  
մամբ եղած է : Ի՞նչու համար արդեօք

պարզագես չասէր թէ Մարիամը բա  
րի գործ մի գործեց , այլ յատկապէս  
կը յաւելու գործեաց դա յիս . միթէ  
ամեն գործ միայն այն ժամանակն բա-  
րի է , երբ առարկան Յիսուս Քրիստոն  
է . Ի՞նչ էր այս գործն , եթէ ոչ , մի  
պատիւ , մի յարդանք Յիսուս Քրիստո-  
սին : Այսպանե՞նք արդեօք այս յար-  
դանքն որ տրուեցաւ Յիսուսին , որ  
արժանի է ամենայն յարդանաց : Բայց  
ոչ այսպաքէն այսու կը զանամք նմա մեր  
յարդանքներն : Ասե՞նք արդեօք թէ՝  
այս յարդանքն անպատիւ էր և անոտե-  
ղի , ասե՞նք արդեօք թէ անխոհեմ էր  
իւր կերպն և ձեւն : Եթէ այսպէս ա-  
սե՞նք , ուրեմն պէտք չէր որ նոյն կինն  
այնպիսի անսահման գովեստի արժա-  
նանար . սակայն արժանացաւ նա եւ  
պէտք չէ աշխատ առնել զնա և վե-  
րաւորել . Վասն զի եթէ յարդանաց  
ձեւն յանդիմանութեսն արժանի կ'ե-  
րեւի մեզ , բան մի կարող չեմք առնել  
մեր առարկային համար , որ է Յիսուս  
Քրիստոս : Ուրեմն փոխանակ աճապա-  
րելու և դատելու թէ ի՞նչ արար Մա-  
րիամ , և փոխանակ քննելու՝ թէ ի՞նչ  
կարող էր առնել , ամենէն առաջ տես-  
նեմք թէ ի՞նչ կամեցաւ առնել . թէ  
զո՞լ կամեցաւ յարդել , և որոյ սիրոյն  
համար եհեղիւղն ազնիւ և մեծագին .  
Այս հարցնեմք մեզ թէ արդեօք այն  
գործն , որ բարի է Յիսուսի նկատմամբ ,  
միթէ բարի չէ ամենայն մասամբ եւ  
ամենայն բովանդակութետմբ :

Բաց յայսմանէ եթէ միանդամը ըս-  
ըռւնեմք գործն այն իմաստով , որ մի  
յարդանք է այն առ Յիսուս , այն ժա-  
մանակ կը տեսնեմք այն զգացումներն  
որ նոյն գործն ներշնչեցին : Այս յար-  
դանքն , այս պատիւն ոչ թէ միայն հա-  
ճեկի էր այն պատճառաւ , որ աւ զլաւած  
էր Յիսուս Քրիստոսին , այլ որ նոյն  
նոյն Քը իբր արժանի էր այս պատճառ :

Ինչ կամին թալ խօսին ձեւոյն վրայ ,  
սակայն սոյն յարդանքն կը յայտնէ , ու-  
մեն բան , ինչ որ քրիստոնեաց հոգին  
ովէտք է զգաց Յիսուս Քրիստոսին հա-  
մար : Եւ արդարեւ ի՞նչ պէտք է առեմք  
մեր Աստուածամարդ Փրկչին , և  
ի՞նչ պէտք է որսնէ նա մեր սրամին մէջ ,  
մեր պատիւ եւ յարդանք մատուցած  
ժամանակ : Ի՞նչ , միթէ բաւական է  
միայն որ սբանչանամք նորա վերայ ,  
յարդեմք զնա և 'ի վեր դասեմք մեր  
մոքով քան զամենայն իմաստունա ,  
քան զամենայն հերոսս , քան զամե-  
նայն դիւցազունս եւ քան զամենայն  
մարդիկ : Ոչ , այլ ինչպէս որ նա իւր  
անձն տուաւ մեզ համար , մեք եւս  
պարտիմք տալ մեր անձն նորա համար :  
Թէ մեք և թէ ինչ որ ունիմք բոլողն  
նմա կը պատկանի : Ի՞նչ որ առնեմք  
և ինչ որ զոհեմք նորա համար ամենեւ-  
մին չը հաւասարիր այն մեծ զահին ,  
զօր արար Նոր մեզ համար : Պէտք է  
ուրեմն , պատրաստ լինիմք ամեն բան  
թողսւ նորա ծուռայութեան և փա-  
ռաց համար : Ի՞նչ էր արդեօք Մարի  
ամին արածն , եթէ ոչ այս ամենն հա-  
մանգամայն :

Կը տեսնեմք ահա , որ Մարիամ իւր  
ունեցածներէն ամենէն մեծագինն , ա-  
մենէն ազնիւն և բնափրն կը հեղու , կը  
կորուսանէ ՚ի պատիւ Յիսուսի Քրիս-  
տոսի . վոսն զի արդարեւ կամեցու  
կորուսանել , ինչպէս եւ սշակերտքն  
առարկելով թէ՝ Ընդէ՞ և իրառափ ի-  
շտ այրորին , աւելի լու կը բացասրեն  
Մարիամի միտքն , առանց երեւակայե-  
լու և 'ի իսորս թափանցելու նորա դիւ-  
տաւորութեան : Բաւական չէ միայն  
անուշահոտ իւղն գործ զնելին , եթէ  
Մարիամ չը կորուսանէ զայն : Եւ ու-  
րավիշետեւ հեղուլ միանգամ և բու-  
վանդակի ՚ի զլութ Յիսուսի Քրիստոսի  
կը նշանակէ կորուսանել , ուրեմն Մար-

բնամ կամ ցուտ արդարի կորուսանել զայն : Ն և լու հ ամ օրեց կորուսանել նու իրելով զայն ուղղակի ՚ի պատիւ Յիսուսի Քրիստոսի , քան թէ զործ զնել թերեւս օգտակար և աւելի խոր նայողական կերպիւ : Այս , տարակցո ք կոյ որ Մարիամի ունեցած հարրա տութեան մէջ նոյն աղնիւ իւղն ամենէն մեծագինն էր : Այս , տարակոյս ք կոյ որ Մարիամ եթէ մի այլ մեծա գին բան ունենար , անշռւշտ առաջ զայն պիտի զրհէր . վտան զի կը տես նեմք որ հեղովլ միայն գոհ ք լինիր , ոյլ շիշն եւս կը բեկանէ , այն կծեայ ժիշն որ զայն անուշահոտ իւղն կը պարունակէր : Այս էր , որ առիթ կուտար Յուդային զայրացինմիր աղջակելու , Բնտէր է իրուստ այդ . վասն զի ծառալուած անուշահոտութիւնն կարող էր զուարձութիւն աալ , խակ շիշն բեկումէն ինչ օգուտ կար : Բայց շատ կը սիսալմէք երբ այսպէս մոռածեմք , Մարիամի դիսաւորութիւնն այն չէր , որ անուշահոտ իւղն հեղովլ զուարձութիւն պատճառէ , այլ նա կը փափաքէր իրուսանել ինչ որ իրեն համար թանիագինն էր : Նա կամէր յայտնել եւ հաստատել միանգամայն , որ չունի ոչ ինչ առաւել մատագին քան զթիսուս Քրիստոս : Նա կը յայտնէր , որ պատրաստ է ամեն զահողութիւն առնել իւր Փրկչին համար : Նոյն պատեհ առթիւ Մարիամ աղնիւ իւղն միայն եհեղ ՚ի գլուխ Փրկին , որ զահ էր և միանգամայն յարգանք , որ իրական դպր էր եւ միանգամայն նշան իւր սրտի զգացման և դիսաւորութեան : Նա կը նուիրէ և կը պաշուէ : Այս դիտաւորութեամք ահա եհեղ նա աղնիւ իւղն , այս դիտաւորութեամք եւ բեկ նա կծեայ շիշն : Ե ինչու արդեօք ուրիշ բան չունի Մարիամ որ կորուսանէ այն Փրկչին համ էր : Իւր անձն

կորոյս , իւր անձն ուրացաւ Մարիամին համար : Ինչու արդեօք Մարիամ ըս կարողանար խորտակել , բեկանել իւր անձն իւր Փրկչին համար : Այս , եթէ լու քննեմք , կը տեսնեմք , որ Մարիամ երբ անուշահոտ իւղն վտակօրէն կը հեղու իւր Փրկչի օրհնեալ ձակատինն իւր շիշն կը բեկանէ , յորմէ կը ծաւալի բուրաւմն անուշութեան , նա ընդ նմին կը բեկանէ իւր զջացեալ սիրան , յորմէ կը ծաւալին նոյն տան մէջ վիշտ , սէր և յոյս , որք առաւել աղնիւ են քան զրապասան , քան զիլնդրուկ եւ քան վնունկս անուշունս : Դուք զ նշմարեցիք այս հոգեկան անուշութեան ծաւալումն , ով անհամ բեր և աններող աշակերտք . դուք մի այն նարդեան իւղն և բեկուած շիշն տեսոք : Ի զուր ծաւալեցաւ ձեր առջեւ Մարիամի սրտի անուշահոտութիւնն . բայց ձեր Տէրն հոտոտեց զայն : Նա հասիցաւ և գնահատեց այն գործն , զրդ ձեր հպարտ սրտերն տակաւին կարող չէն բմբոնել և զգալ : Նա խոր թափանցեց և կարգաց ինդ Մարիամիներքին վիշտն : Նա լսեց նորա զջաման ներքին արտասունեներն , որոնք կարող չէն թերեւս հեղանիլ և կաթիլ կաթիլ հոտելնորս սրտին վրայ : Յիսուս կը անսնէ այս համր և լոին վիտաց գաղտնիքն : Փրկին և մեղաւոր կինն կը ճանաչեն եւ կը համինան զիրեար : Լուռ են նոքա , բայց այս լուռ թեան մէջ մի պանցիլ և անպատմելի գործ կը կատարուի , զրդ դուք կարող չէք հասկինալ և բմբոնել , մինչեւ որ չզդաք նոյն վիշտն և նոյն սէրն , մինչեւ որ լուռ թեան Յիսուսի գլուխն վերայ նոյն անուշահոտութիւնն , մինչեւ որ շամանք նորա ոտքերն ձեր արտասուք ներով եւ մինչեւ ով զ բեկանէք ձեր

սկզբան նորա առ լիւ :

Մի ասեք ուրեմն Մարիամին . Ըն թէ՞ է իրադադ այդ : Վասն զի նա վախտահար է , նա զգածուած է , նա յափշտակուած է եւ կարող չէ ձեր խօսքերն լսել եւ հասկնալ . Եթէ այս վիճակին մէջ չը լմնէր , անցուշտ պիտի ասեք ձեզ . “Ես կը ցաւիմ , կը վլուա նամ աւելի այն պատճառաւ , որ կորող չեմ աւելի զսհել աւելի կորուսանել : Այս , ինչքան փոքր բաներ են այս աղնիւ իւղն եւ այս կճեայ չին : Ի՞նչքան փոքր է սրախա համար աշխարհն բովանդակ : Այս , ինչու չեմ կարող իմ սցին ուրախական յափշտակութեանս մէջ , իմ Փրկչիս առջեւ , առ ոտն կոխել ամեն բան , ինչ որ զարմանալի է աշխարհին համար , ինչ որ կը պատրեն մէր զգայարակներն ինչու համար կարող չեմ առ ոտն կոխել ամեն շքեղութիւն , ամեն փառք եւ ամեն վայելութիւնը արքայականը : Քայց ես կ'առնեմ , ինչ որ կարող եմ որպէս զի իմ Փրկիչն ճանաչէ ար ես զինքն կը սիրեմ : Ինչ որ ես կը նուիրեմ , ինչ որ ես կը զսհեմ , սոքա արժանի չեն զոհ անան անգամ կը լսւ : Սոքա միայն նշաններ են : Այս , երանիթէ այն նշաններն կարողանային ճըշտիւ յոցտնել , ինչ որ կը յաւլի , ինչ որ կ'անցնի իմ սրախա մէջու :

Այսպէս կը մտածէ ահա Մարիամ , այս կ'երեւի ահա իւր բոլոր վարմանց մէջ : Երբէք բաւական չեն նորա համար բեկուած շին և ծաւալաւած անուշահոտ իւղն : Նորա սիրան վառաւուծ է . նա յանձն կ'առնու . մի ամենախանարհ պաշտօն . նա օտարի տան մէջ կը լուայ Յիսուսի ոտքերն , որ տան տիրոջ սրարտաւորութիւնն էր : Նա կը լուայ ոչ թէ ջրավ , այլ աղնիւ խզալ : Նա կը սրբէ ոչ թէ զենքակալ , այլ իւր մաշնութեալ : Միուլբանիւ նա գործ կը

գնէ ամեն ցցց , ամեն նշան երկիր կածութեան և երկրագագութեան : Նա կը խոնարհի , նա կը պաշտէ , նա լը խօսիր , վասն զի խօսքն բաւական չեն նորա զգայածներն արտաքայակիլու : վասն զի նորա պաշտածն միայն մարդ չէ , և ոչ առաջննն ՚ի մարդկանէ . այլ իւր Փրկիչն , իւր Աստուածն :

Եթէ աշակերտներն կարող չեն Մարիամի որտին մէջ աեսնել ինչ որ իրենց Վարդապետն կը աւեսնէր , գոլէ կարող էին Ենթադրել , կարող էին մակարերել Մարիամի սէրն , վիշտն և երախտագիտութիւնն : Նոքա կարող էին ենթադրել որ այս փափուկ սիրան այս աղնիւ հոգին , երկար սպասելին զինի , իւր փրկութեան Խմսանին հանդիպելով , կարող չէր ժումել , կարող չէր իւր սրախ թորին սանձահարել . կարող չէր երկար ժամանակ խորհիլ եւ գատել թէ՝ ինչ ձեւ յորդանք պէտք է մատուցանէ Յիսուս Փրկառութին , Ի՞նչ կը լմնէր արդեօք եթէ աշակերտներն ճանաչէին , եթէ հազարդ լմնէին մանաւանդ այն զգացու մներուն , որոնք Մարիամի սիրան ու հոգին կը յուղին : Նոքա չեն կարծէր եւ լը գիտէին տակաւին թէ այն օրն երբ Յիսուս կը ճառէր իրենց հետ Արմենի սեղանին փայ , իւր առաքելութեան և պաշտօնին վերջին օրն եր . վասն զի հասած էր ժամն չարչարանց :

Աշակերտոք չեն նախատեսեր նաև , որ իրենց Վարդապետի ճանապարհն թեթանիայէն ՚ի Ենթակակէ . Բեթփաւ կէէն յԵրսւապէմ , էր ճանապարհ մահուան . չեն գիտեր , որ իրենք կ'ուղեկցին նման ՚ի տեղի շարչարանց եւ օրերն կարծէալ են արդէն : Ի՞նչ կ'ասեմ : Միթէ կամեցան նոքա հաւատալ , երբ Փրկիչն կը խօսէր իւր մատակայ մահուն համար , ցորենի հա-

տին համար, որ պէտք է մեռներ, որ միջրատին ձևանի, բարեւապատկուի և շատ արդիւնք առօյ ։ Կանեցան նորա հաւատաց բարձրացը ՚ի խաչ, բազմել լոյն ՚ի գոհն խորհրդուոր, որուն վերացէն առ նորն պիտի ձգէր ամեն մար, զիկ, Քան լիցի, Տէր, կ'աղղղակենն նորա, քան լիցի Տէր, չը պատահիր քեղայսպիտիքան, Արդեօք խեղճ կինն հաւատաց աւելի պարզութեամբ, արդեօք աւելի լաւ հասկացաւ նա : Արդեօք աւելին թափանցեց նա ՚ի խաչ խորհրդոյ Խաչին, որ յայտնուած էր, բայց Յիսուսի հետ անբաժան զբաղ տշակերտներն տակաւին հաւատացած չէին : Արդեօք Մարիամ կանխեց քան զայտիկերտան Խաչի խորհուրդն հասկրնալու : Լաւցէր Յիսուս Քրիստոսին, թէ ինչ կը խօսի Մարկոսի Աւետարանին մէջ, « Յառաջագոյն խնկեաց (Մարիամ) զմարմին իմ ՚ի նշան պատառաց » : Նա պահպանած էր սոյն խւզն իմ թազման տւուր համար : Թազման աւուր համար : Բայց Մարիամ արդէն գործ կը գնէ զայն խւզն, արդէն կը հեղու ամբողջապէս Յիսուսի գլխոցն եւ ոտից վերսոց : Հառած է ուրեմն թազման օրն, և արդէն կը թազմէ ուրեմն Մարիամ զՅիսուս : Այն, Այն, սոյն օրն, լատ հաւատոց Մարիամի, արդէն օր թազման է : Նորա վիշտն կը կանխէ քան զժամն սոյոց : Նա արդէն կը տեսնէ զահն կատարուած . նա կը տեսնէ զահն հարեալ, որ իւր առջեւ կը շարժի, նա կը տեսնէ Գառն Առ տուծոյ զենուած, տրիւնաթաթաւ, անջունէ և անմառւնչ : Մարիամ իրեն հետ խօսող Յիսուսին թազման պատիւ կը տառ, կը խնիէ, կ'անուշահոտէ այն իւզով, զօր պահպանած էր անկենդան մորմինն օճանելու համար : Այսափ կենդանի է ահա Մարիամի հաւատան, այսպահի կանխած է ահա

նորա վիշտն, նորա յաւնյառաջքոն զժամանակն, այսափ թափանցած է նա ՚ի խորա մատաց և խորհրդոյ Յիսուսի Քրիստոսի : Ի՞նչ կը կարծէք, միթէ Փրկիչն չը տեսնե՞ր այս ամենն, միթէ չը կարդա՞ր Մարիամի սիրան, միթէ չը նշմարէր նորա հեղ, ամբիծ և շերմ հաւատան : Այն, կը նշմարէ, կը տեսնէ, ուստի եւ Մարիամի գործն բոլի կ'անու անէ, որ բարութեան ումեն օրոյմաններն իւր մէջ կ'ամփափէ : Այն, կը տեսնէք ահա, որ կարող չեմք մէք տուղայի հետ : « Քնչ զէր է կորուստ իւղցոց սպորիկո : Վասն զի կորուստ չը կայ բնաւ : Մարիամի հաւատոց և սիրոյ օրինակն նոյն հաւատոքն և սէրէն գարուց ՚ի գարս իրեւ կինդանի անուշահութիրուուած և ծաւալուած հսկեւոր շմառ թիւնն, հազար և հաղղաց անդամն աւելի կ'արմեն քան հեղուած աղնիւ իւղն և բնիկուած շին : Բայց եթէ այն կինն իւր հաւատոց աշօք Յիսուսի Քրիստոսի մահն եւս չը նշմարէր, այսքան մօտակայ, այօքան գառն, այօքան անխուսափելի, գարձեւալ կզկար, որ իւր հետ խօսող աշխարհը Փրկիչն և Աստուծոց Որդին պիտի չը մեար միշտ երկրի վերսոց : Օր մի պիտի թողուր աշխարհս, ուր իւր ներկայութեամբ կը լուսաւորէր մէք տարագրաւթեան, մեք պանդխոտութեան միժութիւնն : Օր մի պիտի թաղսւր աշխարհս, եւ իւր շնորհօք և ճշմարտութեամբ զեշ զուն խօսքերն այլ եւս պիտի չը լոււնն : Կրզգար Մարիամ, որ աղքատներն միշտ մեղ հետ ունենալ : Բաց յայտմանէ, Մարիամ կարող չը առաքելոց պէս միշտ Յիսուսի Քրիստոսի հետ շրջել և նորա տեսութեամբ և խօսքերով կը տապնուլ : Արդեօք տեսուծ էր նա շատ

անգամ զՅիսուս . արդեօք լսած էր  
երկար ժամանակ նորա խօսքերն . Ան-  
ծանօթ է մեզ այս կէտն . Բայց որչափ  
փոքր բան էին սոյն օրհնեալ հանդի-  
պումեներն համեմատելվ սովորական  
ընկերակցութեան հետ . որչափ հա-  
ղուագիւտ էին , համեմատելով Մա-  
րիամի զդացած կարուութեան հետ :  
Այս , ի՞նչ յափշտակութեամբ , ի՞նչ  
հրձուանօք կը դիտէր , կը տեմնէր Յի-  
սուսի գալուստն : Ի՞նչ շտապաւ , ի՞նչ  
եռանդով կը չքէր յոսա Յիսուսի և կը  
ուստիրաստուէր նորա աստուածային  
խօսքերն լսելու , ճաշակելու և մի հատն  
անգամ չը կորուսանելու : Յաւ խոենու-  
կանութեան ըստ մեծ սոյնպիսի մի եր-  
ջանիկ ժամաւ մէջ , եթէ Մարիամ առ  
վայր մի կը մունայ ողբաստներն , ( որք  
ի բացակայութեան Յիսուսի պիտի  
ներկայացնեն զնոտ ) և կ'երթաց զոհե-  
լու այս աստուածային բարեկամին հա-  
մար իւր ժամանակն ու ճոխութիւնն :  
Եթէ Մարիամ կ'աճապարէ ծառայել  
և պատուել զնոտ իսկ անձն այն Փլրկ-  
չն . զօրյետ ժամանակաց պիտի յար-  
դէ և պատուէ անցու շոյ յանձն աղքա-  
տաց , եթէ այսափ փափուկ է Մա-  
րիամի դիրքն , ով կարաղ է ուրեմն  
չակնածել այն դիրքէն . ովկարողէ հա-  
մարձակիլ այսպանել և կըսամբել զՄա-  
րիամ , եթէ ոչ այն ասուն սրաերն , ո-  
րոց աչքին , ինչ որ սովորական շափով  
չէ , անմտութիւն է և անպատեհու-  
թիւն , որոնք այլոց խնայութիւն եւ  
ժումկալութիւն կը քարոզեն , բայց  
իւրենք ոչ ժումկալութիւն ունին և ոչ  
չափաւորութիւն :

Միիթարուէ , Մարիամ . այն Առ  
սուածն , որ սիրով մարդ եղաւ . նա  
կը ներէ և կը թողու՝ զնոքն սիրողնե-  
րու պարտքն : Քաջալերուէ եւ դու ,  
իւրեղմ ժողովուրդ , որ հեղ և մարդա-  
մեր . Թաղաւորի դալատեան աւետիսն

լած ժամանակ , նորա շուրջն ըղործ-  
ցար և յաղթական հանգէս մի կազ-  
մեցիր մինչեւ ՚ի բաղաքն ակրասպան :  
Յիսուս խօսեցաւ . կարող ես դու ու-  
րեմն , ժողովուրդ , հետեւիլ սրակո-  
շարժմանն , կարող ես տարածանել  
հանդերձներդ ՚ի պատիւ հեղ արքային ,  
կարող ես արմաւենի ոստեր տիո ել ,  
սրակու զի փոշոտ ճանապարհի վերաց  
կանաչը կոտար մի պատրաստես Յի-  
սուսին : Մի երկնչիր , որ Յուդան պիտի  
աղաղակէ . « Ընդդէր է կորուսադ այդ ու  
Նորա Տէրն և վարդապետն կամի , որ  
լինի այդ կորուսան , և նորա գեծութիւնն  
ու ներուղամտութիւնն խասացուած է  
ձեր երգերուն և արմաւենիներուն :  
Զէ ասուած բնաւ թէ վերջն դա-  
տաստանի օրն սիրու չըներուի ամե-  
նարդար եւ ամենասուրբ սիրոց յոր-  
դութեանց կամ չոփազանցութեանցը  
Քո մէրդ կը զեզանի , քո մէրդ կը յոր-  
դի , ժողովուրդ , և այս յորդութեան  
նշաններն են նուրախուկան երգերդ ,  
հանդերձներուդ տարածումն եւ կա-  
նաչ ոստոց ափաւումն :

Հարկ կայ դարձեալ խօսիլ թէ  
որչափ ուսումն կը ներկայացնէ մեզ  
սոյն պատմաւթիւնն : Որչափ քննե-  
ցինք , որչափ խար թափանցեցինք ,  
այնչափ դասեր և խոստներ ելան ա-  
նուշահոտ ամսանի անուշահոտ պատ-  
մաւթիւնն : Քննել անգամ հարկ չէր .  
բաւական էր միսցն կարդալ զայն , սոյն  
մեծ և փրկարար դասն գտնելու և ու-  
սանելու համար , այն է՝ մեր նմանեաց ,  
մեր եղբարց գործոց մէջ գործողի Շէ-  
պաւորութեանն կամ որդին նոյել :

( Նորունակիլ ։ )

ՔԵՓՈՒԹ ԿԱՆՑ ՏՕՆ ՔԱԼՈՒԹԵԱՆ ՀՐԵՒՑ

Հրեւց Քաւութեան Տօնն ըլ գիտելով թէ ուրիշ տեղեր բնազէս կը կատարուի , բայց Երուսաղէմի մէջ ոյնչափ խիստ պատրաստութիւններ և ծոմապահութիւններ կան , որ ափշութեան արժանի է : Տօնախմբութեան օրն հառած ժամանակ , արտասուաց և խոր հառաջանոց հետ շատերն իրենց կուրծքերն կը ծեծեն և զարհութելի շարժումներ կ'անեն :

Այս ապրի Քաւութեան տօնակատարութեան ժամանակ , որ ամսոց 9ին պատահեցաւ , մի Հրեւց սաստիկ ծոմապահութիւններ և կուրծքը ծեծելէն Ժողովարանի (Սինագոգայի) մէջ նուազեցաւ ընկաւ և մեռաւ :

Արդարեւ՝ մի կողմէն խիստ սրտաւ շարժ տեսարան կը ներկայացնէ Հրեւց հայրենասիրութիւնն , որոնք ամեն տարի խումբ խումբ ՚ի Պազեստին կը դիմեն , գետնեներ կ'առնուն , բնակարաններ կը հաստատեն և շատ անդամ Ասղոմանեան Տաճարի պարապին տակ , ծեր և մանուկ , շարան շարան կը կան գնին (ըստ որում իրաւունքը չունին Քրիստոնէից նման պարապէններս և ՚ի Տաճարն մանելու) իրենց երեւներն պարզապի քարերուն կը քսեն , կը հետեւ կան , կ'արտաստեն և յարտաստե կը շարժեն տեսովներն . բայց միւս կողմէն ևս շատ ցաւալի է , որ Քրիստոնէութեան ծոցըն մէջ , Մեսիայի գալստեան յիշատակներով նուիրագործուած Երկրին մէջ , տակաւին խատիւ կը շարունակեն իրենց Հրեւական օրինապահութիւն , որուն մէջ , Աստուածաշռնչեն արտաքը , խիստ անհեթեթ այլանդակութիւններ կան , Եւերեւս Թալմուտի եւ Տօրայի քաղմատիմի մեկութիւններէն տարածուած ժաղարդեան մէջ :

Շատ զարմանալի է , որ յատկապէս

Հրեւց քրիստոնէուկան վերադարձին համար կազմուած Անդզիսկան առաքելական Ընկերութիւնն , որ ձրի հիւանդանուցներ , գեղարաններ , բժիշկներ , գորոտոցներ եւ քարոզիչներ ունի Երուսաղէմի մէջ , իւր մեծածախ զրհութեանց փախարէն խիստ սակաւ կը յաջողի Հրեւաներ շահել ՚ի քրիստոնէութիւն : Քարոզիչներու սննդու գործունէութեան գէմ կ'երե՛ի նաև ունինդիր Հրեւց կողմէն սաստիկ ընդիմութիւն և տաելութիւն , Երբեմն կը տեսնաւի , որ քարոզիչն կը քարոզէ և Հրեւց պատանիքն հայհցանքներ կը թափեն գլուուն , Քարոզիչն ըլ զայրանար ամենեւին , չընդհատէր իւր խօսքն , այլ ամենայն մեզմութեամբ կը շարունակէ իւր քարոզն , բայց միւս կողմէն աւելի կը գրգռին և շատ անգամ թքանելով կանցնին կ'երթան :

Խորին ու շագրաւթեան արժանի է այս երեւոյթն եւ մեք որշափ հետազօտած եմք , ուրիշ առիթ չեմք գտած այս սաստիկ ընդդիմութեան , եթէ ոչ , որ Հրեւցը ամենեւին առ հասարակ պարաւորութիւն համարած են մանկութենէ ուսանիլ և յաճախ կարդալ հրեւական մեկնութիւններն : Հարցասիրութեան համար սրուածարան մանեւրի է , որ մոտած եմք իրենց վարժարանն և տեսուծ եմք ոչ միայն մասնութիւն , այլ նաև շատ հասակաւոր մարդիկ , որոնք զբաղվուած են միմիայն կրօնական գրքեր կարդալու , և շատերն այնչափ յափշտակութեամբ , այնչափ քարձրաձայն եռանդով կը կարդան , որ և ոչ կը նային ներս մանող կամ իրենց մօտ կանգնով մարդուն վերաց :

Այս օրը , որ Հրեւցը Քաւութեան Տօնն կը կատարեն և հեծեծանքներով ու աղաղակներով Սինագոգան կը թնդացնեն , Անգղիոյ առաքելական Ընկերութիւնն եւս , առանձին գուշ

Մարտուած , աղօթքներ և մազթակիներ  
կանէ Հրեկից քրիստոնէ ական դարձին  
համար .

ԵՐԿՐՈՒԹՅԱՆ ՉՈՂՋԻՆ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Երկու տարի աւաշը լուր տարած-  
ուեցու , որ Երուսաղէմի համար եր-  
կամաց զի պիտի շնուի : Այս մասին  
յատակ երկրաշաբաներ եկան և սկսան  
մանգամանն նկատողութեան առնուլ  
եւ ամենայն պարագայիւր ծրագիր  
պատրաստել :

Քողօք ժողովուրդն յանշափո ու-  
բախացաւ և որ աւուր անհամբեր կը  
տպասէր կատարումն աւեսել , որով  
անշու չո Պաղէստին քաղաքակրթու-  
թեան ճանապարհի մէջ պիտի մանէր  
և մեծամեծ գիւրութիւններ պիտի ու-  
նենար յառաջադիմութեաւ Մանաւանդ՝  
աւելի ուրախալին այն էր , որ խոր կար  
թէ երկաթուղւոց պատճառաւ Յոդ-  
ուկ նաև ահանգիստն և պիտի շնուի :

Սակայն տարիներ անցան և տակա-  
ւին սկզբնաւորութիւնն անգամ չը-  
տեսնուեցաւ ՚ի ցու սրբի ամենացուն :

Թէ իւ խկապէս յայտնի չէ թէ ինչ պատճառներավ յետ մնաց այս բարի  
գիտուորութիւնն կատարումն . միայն  
ընդհանուր համազումն այս է , որ այն  
երկամաց զի շնութիւնն մէծ պա-  
տի կարող է բերել Օսմանեան Տէ-  
րութեան . վասն զի Թուրքիոց Կայսե-  
րութեան մէջ Պաղէստին այն երկիրն  
կամ Նահանգն է , ուր ամենէն աւելի  
եւրոպացիք և Ամերիկացիք կը յաճա-  
խեն , և հետեւապէս , Թուրքիոց վի-  
ճակն Պաղէստինի վիճակէն կը կընեն :

Թէ իւր փառաց և թէ ժողովուրդի  
բարեկեցութեան համար խիստ փա-  
փաքելի էր որ Տէրութիւնն չը յետա-  
ձըգէր արդէն իսկ հրամարակուած  
ոցի բարի դիսաւորութիւնն :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՑՆԻ

Պաղէստինի կառավարիչ Վետամիլ  
Փաշան , որ կ . Պօլիս կոչուած էր , վե-  
րագործաւ ՚ի քաղաքաբա իւր սրաշտոնն  
շարունակելու եւ Պատրիարքաց ու  
Հիւպատոսաց այցելութիւններն ըն-  
դունելին զինի նմբն եւս փախադար-  
ձաբար այց ելու ամենուն :

Տեսնենք թէ ինչ վախճան պիտի  
ունենան || . Եթուցո իրաւանց խըն-  
դիմներն , որոց համար շարունակ կը  
տագնապիսիք և գարման մի գանելու  
համար յատկապէս Պօլիս դրկուեցաւ ,  
փոխանորդութեան առ ժամանակեաց  
պաշտօնիւ , Դերագատիւ . Այսէն եւ  
պիտկապտան , որ քաջահմուտ է թէ  
հակառակորդաց կողմէն եզած դար-  
ձաւածներուն և թէ || . Եթուցո դա-  
րեւոր արտօնութեանց և Տէրութե-  
նէն շնորհուած Հրավարտակաց պա-  
րունակութեանն :

— | տախնոց Ֆրանչեսկեան Վի-  
արանութիւնն , որ || . Երկրին մէջ  
| տախնոց սեպհակունութեանց և ի-  
րաւանց անընդմիջական հսկողութեան  
սրուունն կը վարէ , բարօրունն անկախ  
՚ի Պատրիարքէն , նոր Տեսուչ և Առ-  
խոգահ մի ունեցաւ ներկաց ամսոյս  
մէջ , որ ընդունուեցաւ բազմախու-  
ռն գիմնասրութեամբ և մեծ շքով  
Այս Տեսուչն , թէն նոր կը գոյ ի-  
տալիացէն , բայց աւաշը պաշտօններ  
վարած է արդէն Պաղէստինի մէջ և  
քաջածանօթ է երկրին եւ իւր Վա-  
նուց Վիորանութեանն :

—Պաղէստինի մէջ ներկայ տարւոց  
բերքերն առատ են . ժողովուրդն գոհ  
է իւր վիճակէն : Վեճը ւներն առկա-  
ւին սկսուած չեն , բայց ցողն և տա-  
րապին անընդհան կ'իջանեն եւ անձ-  
րեւներն իսկ Թերեւու շուտով սկսին :